

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



ՄԱՍ 1 «ԿԻՆՈՒՆԵՐԿԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՍԻՆ

Առաջաբան	6
Ղարաբաղյան հակամարտությունը	7
«Կինոերկխոսություններ» նախաձեռնությունը	8
«Կինոերկխոսությունների» հետևում կանգնած մարդիկ	9
Ֆիլմերի ուղեցույց	11

«ԿԻՆՈՒՆԵՐԿԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՍԻՆ

Նաիրա Բաբանա	14
Արմինե Մարտիրոսյան	16
Զոնաթան Քոեն	17
Լուսինե Մուսայեյան	18
Խալիդա Արզումանյան	20
Ռահիմ Չաջիլի	21
Ավագ Հասանով	22
Ալբերտ Ռսկանյան	23



ՄԱՍ 2 ԿԻՆՈՂԻՏՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Տեխնիկական կողմը	26
Ինչպես վարել քննարկումը	27
Քննարկվող հարցերը՝ ըստ ֆիլմերի	30
Խոհեր «Կինոերկխոսությունների» քննարկումների վերաբերյալ	40



ՄԱՍ 3 ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Բառարան	50
Հաճախակի տրվող հարցեր	52
Ինտերնետային աղբյուրներ	54
Կազմակերպությունների ցուցակ	55

Սույն գիրքը հրատարակվել է Եվրոպական միության աջակցությամբ: Այստեղ արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել Եվրոպական միության տեսակետների հետ: Գրքի նյութերը կրթական նպատակով վերատպման կամ օգտագործման դեպքում ինդրում ենք հղում կատարել «Հաշտեցման ռեսուրսներ» կազմակերպությանը (Conciliation Resources):



ՄԱՍ 1

«ԿԻՆՈՒՄԵՆՏԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՍԻՆ

» ՇԱՐԺԿՈՂ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԹԱՐՄ ԼԵՁՈՒ...
ՊԱՏԿԵՐՆԵՐ, ՈՐՈՆՑ «ՇԱՐԺՈՒՄԸ» ԹԵ՛
ՅՈՒՉԱԿԱՆ ԱԼԵԿՍԻՆԴՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՑՆՈՒՄ,
ԹԵ՛ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ:





ԱՌԱՋԱԲԱՆ

«Կինոերկխոսությունները» եզակի նախաձեռնություն է, որի շրջանակներում հայ երիտասարդները՝ Լեռնային Ղարաբաղից և ադրբեջանցի երիտասարդները վավերագրական ֆիլմեր են արտադրել՝ իրենց տարանջատող հակամարտության վերաբերյալ: Ծրագրին 30-ից ավելի երիտասարդներ են մասնակցել, և նրանց ֆիլմերը դիտել են հազարավոր հայեր ու ադրբեջանցիներ: Այս ձեռնարկը տեղեկություններ ու աղբյուրներ է առաջարկում, ինչպես նաև ուղղություն է ցույց տալիս, որպեսզի դուք կարողանաք կինոդիտումներ կազմակերպել ու ընտրված ֆիլմերի վերաբերյալ քննարկումներ անցկացնել: Մեր նպատակն է խրախուսել ու դյուրացնել հայկական ու ադրբեջանական հասարակություններում անցկացվելիք բանավեճերը՝ միմյանց, դարաբաղյան հակամարտության, ինչպես նաև բազմաթիվ այլ դժվարին հարցերի վերաբերյալ, որոնք խանգարում են հայ-ադրբեջանական հաշտեցմանն ու հակամարտության խաղաղ լուծմանը:

ԻՆՉՊԵՏ ՕԳՏՎԵԼ ԱՅՍ ԳՐԵԻՑ

Այս ձեռնարկը երեք մասից է բաղկացած: Գրքի 1-ին մասում կգտնեք «Կինոերկխոսությունների» մասին նախնական տեղեկություններ, ֆիլմերի ուղեցույցը, ինչպես նաև ֆիլմերի հետևում կանգնած մարդկանց որոշ խոհերը:

Գրքի 2-րդ մասում առաջարկված են քննարկման մի շարք թեմաներ ու հարցեր, որոնք ձեզ ուղղություն կտան ու կօգնեն ֆիլմերի վերաբերյալ հանրային քննարկում անցկացնել: Այստեղ ներկայացված են նաև որոշ խոհեր այն քննարկումների վերաբերյալ, որոնք անցկացվել են Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանում:

Գրքի 2-րդ մասում կան նաև տեխնիկական խորհուրդներ, որոնք ձեզ կօգնեն կինոդիտում կազմակերպել:

Գրքի 3-րդ մասում ընդգրկված են լրացուցիչ աղբյուրներ՝ այն ընթերցողների համար, ովքեր ցանկանում են լայնացնել իրենց հետաքրքրությունների շրջանակն ու ավելին իմանալ դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերի մասին: Այստեղ կարող եք գտնել մասնագիտական տերմինների բառարան, ինտերնետային աղբյուրների ցանկ, ինչպես նաև հակամարտության խաղաղ լուծման ուղղությամբ աշխատող հայկական, ադրբեջանական ու միջազգային կազմակերպությունների համառոտ ցուցակ:

Եվ վերջապես, ձեռնարկի կազմի դարձերեսին դուք կգտնեք չորս տեսասկավառակ, որոնք պարունակում են «Կինոերկխոսու-

թյունների» շրջանակներում մինչ այժմ արտադրված 20 ֆիլմ:

Այս ձեռնարկը նախատեսված է ամենատարբեր պատրաստվածության լայն լսարանների համար: Ֆիլմերը դիտելու և վայելելու համար ամենևին պարտադիր չէ օգտվել ձեռնարկում ընդգրկված բոլոր աղբյուրներից: Հետևաբար, ձեզ առաջարկում ենք ընտրել այն նյութերը, որոնք առավել օգտակար կարող են լինել ձեր լսարանի և ձեզ համար, ինչպես նաև այն կոնկրետ թեմայի համար, որը ցանկանում եք քննարկել:



ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Լուսանկարներն օգտագործվել են «Ռուբեն Մանգասարյան» հիմնադրամի թույլտվությամբ:


1980-ականների վերջին, երբ Միխայիլ Գորբաչովը փորձում էր հորհրդային Միությունում բարեփոխումներ իրականացնել, հայերի և ադրբեջանցիների միջև Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի շուրջ հակամարտություն ծավալվեց: ԼՂ-ն հորհրդային Ադրբեջանի տարածքում էր գտնվում: Այնտեղ բնակվող հայերը մեծամասնություն էին կազմում և ցանկանում էին միանալ Հայաստանին: Խորհրդային հեռավոր գավառում 1988թ. փետրվարին սկսված ընդհարումն արագորեն վերածվեց զանգվածային փոխադարձ արտաքսումների (հայերին՝ Ադրբեջանից և ադրբեջանցիներին՝ Հայաստանից): Մոսկվայի վերահսկողությունը վերականգնելու, ինչպես նաև միջնորդության փորձերը ձախողվեցին, և դարաբաղյան հարցը 1991 թվականին դարձավ Խորհրդային Միության փլուզման եական շարժառիթը:

Դրան հետևեց Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի բանակների միջև ծավալուն պատերազմը, որի ընթացքում Հայաստանն աջակցում էր Ղարաբաղին: Պատերազմի ավարտին՝ 1994 թվականին, ոչ միայն բուն ԼՂ-ն, այլև ադրբեջանական յոթ շրջան (ամբողջովին կամ մասամբ) անցան հայկական զինված ուժերի վերահսկողության տակ: Հակամարտության ընթացքում ավելի քան 25,000 մարդ զոհվեց:

Ի լրումն հարյուր հազարավոր հայ և ադրբեջանցի փախստականների հոսքի՝ հարյուր հազարավոր ադրբեջանցիներ տեղահանվեցին ԼՂ շրջակա տարածքներից, ինչպես նաև բուն Ղարաբաղից: Ընդհանուր առմամբ, ավելի քան մեկ միլիոն մարդ կորցրեց իր տունը:

1994թ. հրադադարին հաջորդեց խաղաղարար գործընթացը՝ միջազգային միջնորդների մասնակցությամբ: Գործընթացն իրականացվում է ԵԱՀԿ-ի կողմից ստեղծված Մինսկի խմբի միջոցով, որի համանախագահներն են Ֆրանսիան, Ռուսաստանը և Միացյալ Նահանգները: 1990-ականների վերջին և 2000-ականներին Մինսկի խումբը հակամարտության լուծմանն

ուղղված մի քանի առաջարկ արեց, սակայն դրանցից ոչ մեկը երկու կողմերի համար ընդունելի չէր: 2007թ. «Մադրիդյան սկզբունքներ» կոչվող առաջարկը հիմք դարձավ հայ-ադրբեջանական խաղաղարար բանակցությունների համար: Թեև եղել են պահեր, երբ մադրիդյան սկզբունքներում պարունակված գաղափարներից մի քանիսի շուրջ համաձայնությունը հասանելի է թվացել, սակայն հաշտեցումը դեռևս հեռու է իրականությունից: Յուրաքանչյուր ամիս շփման գծի երկու կողմերում շարունակում են զոհվել հայեր ու ադրբեջանցիներ:



» **ՏԵՎԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԵԼԻ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՄԻԱՅՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՈՒ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՄԲ:**

«ԿԻՆՈՒՆՈՒՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ



«Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակի արդյունքում շարքային հայերն ու ադրբեջանցիները, որոնք, ընդհանուր առմամբ, բավականին լավ էին ինտեգրված միմյանց հետ, ինչպես նաև համընդհանուր խորհրդային ռուսախոս մշակույթին, 1994թ.-ից հետո դադարեցին շփվել: Այս ընթացքում մեծացել է նոր սերունդ: Երիտասարդ հայերի և ադրբեջանցիների մեծ մասը միմյանց հետ ուղղակի շփման փորձ չունեն. իրականում, երբեք «մյուս կողմից» որևէ մեկին չեն հանդիպել: Ինչ էլ որ «գիտեն» միմյանց մասին՝ իրենց երկրների լրատվամիջոցներից են քաղել: Տարածաշրջանում տեղեկատվության հիմնական աղբյուրն էլեկտրոնային լրատվամիջոցներն են, որոնք, ընդհանուր առմամբ, խստորեն վերահսկվում են: Արդյունքում, հայ և ադրբեջանական հասարակություններում ծաղկում են փոխադարձ օտարացումն ու միմյանց մասին բացասական կարծրատիպերը:

2006թ.-ին «Չաշտեցման ռեսուրսներ» բրիտանական խաղաղաստեղծ հասարակական կազմակերպությունը նախաձեռնեց «Կինոերկխոսությունները» փորձելով վերականգնել հայերի և ադրբեջանցիների միջև եղած կամուրջները: «Չաշտեցման ռեսուրսները», համատեղ աշխատանք իրականացնելու նպատակով, որոշեց համագործակցել լրատվամիջոցների բնագավառում աշխատող երեք տեղական

կազմակերպությունների հետ. Երևանում դա մամուլի աջակցության «Ինտերնյուս» հասարակական կազմակերպությունն էր (Ինտերնյուս Չայաստան), Բաքվում՝ «Ինտերնյուս Ադրբեջան» հասարակական կազմակերպությունը (Ինտերնյուս Ադրբեջան), իսկ Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքում՝ Ստեփանակերտի մամուլի ակումբը:

«Կինոերկխոսությունների» հիմքում ընկած է երիտասարդ ադրբեջանցիների և Ղարաբաղի հայերի համար ֆիլմարտադրության միջոցով «պատուհաններ» բացելու գաղափարը, որը կօգնի նրանց ծանոթանալ լրատվամիջոցների բնագավառին, ուղղակիորեն հաղորդակցվել միմյանց հետ, ինչպես նաև կնպաստի ավելի լայն հասարակական շփումներին: Մասնակիցներն անցնում են ֆիլմարտադրության դասընթացներ և ծանոթանում խաղաղաստեղծ գործունեության հիմնական սկզբունքներին: Ինտերնյուս Չայաստանի և Ինտերնյուս Ադրբեջանի աջակցությամբ՝ նրանք իրենց գաղափարները վերածում են ֆիլմերի և, պրոֆեսիոնալ ռեժիսորի օգնությամբ, կատարում են իրենց առաջին մոնտաժը:

Երկու հավաքածուներում (2007թ. և 2010թ.) ներկայացված են նախագծի հաջորդական փուլերի ֆիլմերը, որոնք առաջին անգամ ցուցադրվել են Լոնդոնի ժամանակակից արվեստի ինստիտուտում, որից հետո՝ Չայաստանում, Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում: Ֆիլմերից մի քանիսը ցուցադրվել են Չարավային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի հեռուստաալիքներով: Ֆիլմերը կարող եք գտնել նաև ինտերնետում՝ <http://vimeo.com/channels/df> կայքում:

2010թ. օգոստոսից մինչև 2011թ. նոյեմբերն ընկած ժամանակա-

հատվածում Ինտերնյուս Չայաստանը, Ստեփանակերտի մամուլի ակումբը, ինչպես նաև Ինտերնյուս Ադրբեջանի հետ համագործակցող ևս մի ադրբեջանական գործընկեր կազմակերպություն՝ Զումանիտար հետազոտությունների կենտրոնը, տարածաշրջանի տեղական համայնքների համար կինոդիտումների ծրագիր իրականացրին: Ընդհանուր առմամբ, անցկացվել է ավելի քան 90 կինոդիտում՝ ավելի քան 2,000 մարդու մասնակցությամբ: Դիտումներից յուրաքանչյուրին հաջորդել է քննարկում՝ ֆիլմերում բարձրացված թեմաների ու հարցերի շուրջ: «Չաշտեցման ռեսուրսները» կինոդիտումներ է անցկացրել նաև Լոնդոնում, Նյու Յորքում և Վաշինգտոնում՝ համալսարաններում, կոնֆերանսների ընթացքում, ինչպես նաև սփյուռքի շրջանակներում: 2011թ. հոկտեմբերին և նոյեմբերին Ստեփանակերտում և Բաքվում ֆիլմերի գլխավոր հերոսների մասնակցությամբ տեղի ունեցավ երկու հատուկ կինոդիտում՝ մի քանի տարի անց նկարահանված պատմությունները կրկին դիտելու ու քննարկելու համար:

Չուսանք, որ այս ձեռնարկը Չայաստանի, Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի և այլ վայրերի լայն լսարանների համար նախագծի ֆիլմերը դիտելու և քննարկելու օգտակար աղբյուր կհանդիսանա:

» ԱՅՍ ՆԱԽԱԳԻԾՆ ԱՆՉԱՓ ԿԱՐԵՎՈՐ Է, ՈՐՈՎՅԵՏԵՎ ԱՅՆ ԲԱԶՄԱՇԵՐՏ Է... ՉՆԱՅԱԾ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՅՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ՄԻՍՅԱՆՑ ՅԵՏ ՉՐՈՒՑԵԼ ՈՒ ՇՓԿԵԼ: ՆՐԱՆՔ ՆԱԵՎ ՉԲԱՂԿՈՒՄ ԵՆ ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՄ, ԹԵ ԼՐԱՏԿԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՆ ԻՐԵՆԻՑ ԻՆՉ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ... ԱՊԱ ՆՐԱՆՔ ՖԻԼՄԵՐ ԵՆ ԱՏԵՂԾՈՒՄ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ:

**ՆՈՒՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ
ԻՆՏԵՐՆՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՕՐԵՆ**

**«ԿԻՆՈՒՆԵՐԿԻՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»
ՀԵՏԵՎՈՒՄ ԿԱՆԳՆԱԾ ՄԱՐԴԻԿ**



«Կինոերկխոսությունները» հայկական և արդրեջանական չորս կազմակերպությունների և «Հաշտեցման ռեսուրսների» համատեղ ծրագիրն է:

Մամուլի աջակցության «Ինտերնյուս» հասարակական կազմակերպությունը գործում է Երևանում, 1995 թվականից: Նրա նպատակն է՝ նորարարական մոտեցումների օգնությամբ առաջ տանել արտահայտման ազատության գաղափարը, ինչպես նաև նպաստել ազատ, անկախ և բազմակարծիք տեղեկատվության ստեղծմանն ու տարածմանը: «Ինտերնյուսը» լրագրողների համար կազմակերպում է դասընթացներ, զբաղվում է նրանց շահերի պաշտպանությամբ, նպաստում է նոր լրատվական գործիքների տարածմանը, ինչպես նաև լրատվամիջոցների ուժն օգտագործում է ի նպաստ սոցիալական, քաղաքական և ազգային հակամարտությունների մեղմացման: «Ինտերնյուսը» նաև պատրաստում է հեռուստահաղորդումներ, վավերագրական ֆիլմեր և մուլտիմեդիա արտադրանք:

» www.internews.am



«Ինտերնյուս Ադրբեջան» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1997թ.: «Ինտերնյուսը» լրագրողների և անկախ լրատվամիջոցների համար դասընթացներ է կազմակերպում, նրանց աջակցություն տրամադրում, ինչպես նաև ձգտում է մի շարք լրատվական ձևաչափերի միջոցով լուսաբանել արդի սոցիալական ու քաղաքական պրոբլեմները: Կազմակերպությունը, Ինտերնյուս Հայաստանի հետ համագործակցելով, տարիներ շարունակ զբաղվել է հակամարտությունների համեմատական ուսումնասիրությամբ՝ ֆիլմեր արտադրելով աշխարհի տարբեր կոնֆլիկտների մասին: Ինտերնյուս Ադրբեջանը և Ինտերնյուս Հայաստանը, Ինտերնյուս Վրաստանի հետ համատեղ, իրականացնում են «Մանկական խաչմերուկ» ծրագիրը, որին մասնակցում են Հարավային Կովկասում ապրող պատանիները:

» www.internews.az

» ԱՅՍ ՆԱԽԱԳԻԾԸ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐԻՆ
 ԷԼ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ
 ՏԵՄՆԵԼ ԴԻՄԱՑԻՆԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ
 ԴԵՄՔՆ ՈՒ ՄԱՐԴԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ:

ԱՎԱԶ ՀԱՍԱՆՈՎ
 ՀՈՒՄԱՆԻՏԱՐ
 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ



Ստեփանակերտի մամուլի ակումբը (ՄՄԱ) հիմնադրվել է 1998թ.՝ որպես Լեռնային Ղարաբաղի ազատ ու ժողովրդավար լրատվամիջոցների պաշտպանության ու զարգացման կենտրոն: Ակումբը կազմակերպում է լրագրողական դասընթացներ, նպաստում Հարավային Կովկասի լրագրողների համագործակցությանը, անկախ մամուլի կայացմանը, փորձում բարելավել լրատվական օրենսդրությունը: Այն նաև նպաստում է աղբյուրազնային և հայ լրագրողների միջև համագործակցությանը՝ անկախ տեղեկատվության փոխանակման բնագավառում: Հինգ տարի շարունակ, 2004-2009թթ. ղնկած ժամանակահատվածում, ՄՄԱ-ն հրատարակել է «Դեմո» անկախ երկշաբաթաթերթը: 2009թ.-ից ակումբը հրատարակում է «Անալիտիկոն» վերլուծական ամսագիրը:

» www.theanalyticon.com



1997թ. սկսած՝ **Հումանիտար հետազոտությունների կենտրոնը (ՀՀԿ)** զարգացնում է բաղաբացիական ակտիվությունը, պաշտպանում մարդու իրավունքները, ինչպես նաև աշխատում լուծել տեղահանման ու միգրացիայի հետ կապված կոնկրետ հիմնախնդիրներ: ՀՀԿ-ն, սերտորեն կապված լինելով փախստականների համայնքների հետ, նրանց առաջարկում է բազմապիսի դասընթացներ, իրավական խորհրդատվություն և աջակցություն: ՀՀԿ-ն նաև իրականացրել է մի շարք լրատվական նախագծեր, թողարկել զեկույցներ, գրքեր ու ֆիլմեր՝ հատուկ ուշադրություն դարձնելով դարաբաղյան հակամարտության հասարակական հեռանկարների վրա: ՀՀԿ-ն նաև հարավկովկասյան վավերագրական ֆիլմերի «Ազգությունը՝ մարդ» փառատոնի խորհրդի հիմնադիր անդամն է:

» www.humanrights-az.org

ՖԻԼՄԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ



ՖԻԼՄ 1 (9'13")
13 ՏԱՐԻ ԱՆՑ

Չեղիսակ՝
Էլջան Մամմադով

Ռեժիսոր՝
Այազ Սալան

Ադրբեջանցի փախստականների առօրյան հանրակացարանում:

ՖԻԼՄ 2 (12'21")
ՎԵՐԱԳՆՆՈՒՄ

Չեղիսակ՝
Մամեդշարիֆ Ալեկպերով

Ռեժիսոր՝
Էլջան Մամմադով

Պատերազմի ժամանակ կուրացած ադրբեջանցի վետերանը հիշում է վերականգնման իր դժվարին ճանապարհը:

ՖԻԼՄ 3 (16'28")
Ի՞ՆՉ ԵՆՔ ՄԵՆՔ ՈՒԶՈՒՄ

Չեղիսակ՝
Գյուլնարա Մամեդզադե

Ռեժիսոր՝
Էլջան Մամմադով

Երիտասարդ ադրբեջանցին խորհում է այն մասին, թե ինչ է տևական խաղաղությունն իր համար:

ՖԻԼՄ 4 (12'19")
ԲԶԵԶԱԿԵՐՆԵՐԸ

Չեղիսակ՝
Մադինա Նիկ-Նաջաթ

Ռեժիսոր՝
Այազ Սալան

Չեզնական հայացք՝ Ադրբեջանի երկու գյուղերի միջև տոհմական թշնամության պատմությանը, ինչպես նաև այն մասին, թե ինչպես է «կերտվում ինքնությունը»:



ՖԻԼՄ 5 (20'07")
ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ՝
ՓԱԽՍՏԱԿԱԼ

Յեղիակ՝
 Արմինե Մարտիրոսյան

Ռեժիսոր՝
 Լևոն Զալանթար

Բաբվեցի հայերից մեկը բնակություն է հաստատել Ստեփանակերտում, մյուսը՝ Շուշիում: Նրանց անցյալն ու ներկան:



ՖԻԼՄ 6 (15'00")
ԱՄՈՒՐ ԸՆԿՈՒՅՁ

Յեղիակ՝
 Կարինե Սաֆարյան

Ռեժիսոր՝
 Լևոն Զալանթար

Հայ ռազմագերու կինը պատմում է ամուսնու փրկության, իրենց ամուր ընտանիքի և ընկույզի մուրաբայի մասին:



ՖԻԼՄ 7 (15'45")
ԿՅԱՆՔԻՑ
ԸՇՎԱՃՆԵՐԸ

Յեղիակ՝
 Գայանե Բալայան

Ռեժիսոր՝
 Լևոն Զալանթար

Ներկայացված է բաբվեցի փախստականի պատմությունը: Ռուս տարեց կնոջ մռայլ ու կարիքավոր կյանքը Լաչինում:



ՖԻԼՄ 8 (11'02")
ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԹԱԿՈՒՄ
Է ԴՈՒՐԸ

Յեղիակ՝
 Ալվարո Գրիգորյան

Ռեժիսոր՝
 Լևոն Զալանթար

Հաշմանդամ դարձած հայ վետերանը փայտի փորագրությունների օգնությամբ կյանքի տոր իմաստ է փնտրում:



ՖԻԼՄ 13 (12'22")
ՍԱԼԱՄ ԱԼԵՅԶՈՒՄ,
ԿՈՎԿԱՍ

Յեղիակ՝
 Իրադա Բուլանա

Ռեժիսորներ՝
 Այազ Սալան
 և Էլջան Մամմադով

1944թ. Կրաստանից Կենտրոնական Ասիա տեղահանված թուրք մեխիտիստների երեք սերունդների աքսորի պատմությունը:



ՖԻԼՄ 14 (14'11")
ՇՈՒՇԻՆ ԿՐԱՆԻ ՏԱԿ

Յեղիակ՝
 Չինարա Հուսեյնովա

Ռեժիսոր՝
 Այազ Սալան

Ամեն տարի Նույն օրը Շուշիից տեղահանված աղբբեջանական համայնքի անդամները հավաքվում են Բաբվում, որ հիշեն իրենց կորցրած հայրենիքը:



ՖԻԼՄ 15 (7'18")
ԴԱՌՈՒՆԼՈՂ

Յեղիակ՝
 Վուգար Սաֆարով

Ռեժիսոր՝
 Այազ Սալան

Հայերի հետ համակարգչային ռազմախաղերով տարված աղբբեջանցի երիտասարդը կորցրել է իրականության զգացողությունը:



ՖԻԼՄ 16 (29'47")
ԻՄ ԹՇՆԱՄԻՆՆՆ ԻՄ
ԸՆԿԵՐԸ

Յեղիակներ՝
 Ալվարո Գրիգորյան
 և Վաֆա Ֆարաջովա

Ռեժիսորներ՝
 Վուգար Սաֆարով
 և Լևոն Զալանթար

Նախկին պատանդներն ու ռազմագերիները պատմում են իրենց գերության փորձի և հայ-աղբբեջանական բանակցությունների մասին, որոնց արդյունքում իրենք վերադարձել են տուն:



ՖԻԼՄ 9 (14'58")
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ
ՅԵՔԻԱԹ

Յեղիսակ՝
Սուսաննա Սայիյան

Ռեժիսոր՝
Լևոն Զալանթար

Լեռնային Ղարաբաղի Վանք գյուղի կյանքը՝ ավանակների ամենամյա մրցավազքի մասնակցի աչքերով:

ՖԻԼՄ 10 (18'52")
ՍՊԵԿՏՐ

Յեղիսակներ՝
Վաֆա Ֆարաշովա
և Արիսա Խաչիկյան

Ռեժիսորներ՝
Լևոն Զալանթար և
Վուզար Սաֆարով

Երկու նկարիչ, մեկը՝ Բաբվում, մյուսը՝ Ստեփանակերտում, նկարելու ընթացքում զրուցում են պատերազմի ու խաղաղության մասին:

ՖԻԼՄ 11 (18'29")
ԸԱՄԱՆՉԱ - ՆԱՄԵ

Յեղիսակներ՝
Վուզար Սաֆարով
և Կարինե Սաֆարյան

Ռեժիսորներ՝
Լևոն Զալանթար և
Վուզար Սաֆարով

Վուզարի ամենահայտնի երաժշտական գործիքի՝ քամանչայի պատմությունը ներկայացնում են ադրբեջանցի և հայ երաժիշտները:

ՖԻԼՄ 12 (21'27")
«ԷԳՈ» ՈՃՈՎ

Յեղիսակներ՝
Նազրին Շաքիրզադե
և Լուսինե Մուսայելյան

Ռեժիսորներ՝
Լևոն Զալանթար
և Վուզար Սաֆարով

Հայ և ադրբեջանցի երիտասարդները խոսում են այն մասին, թե ինչ է Նորածնությունն իրենց համար:



ՖԻԼՄ 17 (15'12")
Ց-ՌԴ ԿԻՆՈՄԵՏՐԻՆ

Յեղիսակներ՝
Արմինե Մարտիրոսյան
և Նաիլյա Բաբանա

Ռեժիսորներ՝
Լևոն Զալանթար
և Վուզար Սաֆարով

Ֆիլմի հերոսուհիները՝ հայ ու ադրբեջանցի, խոսում են այն մասին, թե ղարաբաղյան պատերազմն ինչպիսի ազդեցություն է թողել իրենց ընտանեկան կյանքի վրա, ինչպես նաև պատմում են «մյուս կողմում» ապրող ազգականների մասին:

ՖԻԼՄ 18 (17'45")
ՉԱՐՄՈՒՐԻՆ
ԿՈՎԿԱՍԻՑ

Յեղիսակ՝
Արմինե Մարտիրոսյան

Ռեժիսոր՝
Լևոն Զալանթար

Պատերազմի արդյունքում ցիրուցան եղած ղարաբաղցի ադրբեջանցիների ընտանիքը միավորվել է Ուկրաինայում:

ՖԻԼՄ 19 (20'28")
ԿԱՏԱՐՍԻՍ

Յեղիսակ՝
Դավիթ Սիմոնյան

Ռեժիսոր՝
Լևոն Զալանթար

Ղարաբաղի ականազերծման պատմությունն արտացոլում է այդ տարածաշրջանի պատերազմի երկարատև պատմությունը:

ՖԻԼՄ 20 (12'07")
ԲՈՂՈՐ ՖԻԼՄԵՐՆ ԷԼ
ՍԻՐՈ ՄԱՍԻՆ ԵՆ

Յեղիսակ՝
Լուսինե Մուսայելյան

Ռեժիսոր՝
Լևոն Զալանթար

Հայ թոշակառու Սլավիկը և իր ադրբեջանցի կին Էլմիրան խոսում են իրենց երկարատև ու երջանիկ ամուսնության մասին, որը կարողացել են պահպանել՝ ի հեճուկս ողբերգական պատերազմի:

«ԿԻՆՈՒՆԵՐԿԻՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՍԻՆ

ՆԱԽԼՅԱ ԲԱԲԱԵՎԱ «Ց-ՐԴ ԿԻՆՈՍԵՏՐԻՆ» ՖԻԼՄԻ ՅԵՂԻՆԱԿ

«Կինոերկխոսություններն» իսկական մարտահրավեր էր, որովհետև մեր գործընկերները դժկամությամբ էին շփվում և իրենց բնական չէին պահում: Յուրաքանչյուր քայլ կարող էր թյուրիմացության հանգեցնել: Բայց դա միայն սկզբում էր: Յանկության դեպքում կարելի է միմյանց հետ շփվելու ձև գտնել: Այսպիսի նախագծում կարևորն այն է, որ անհամաձայնությունները սառը պատերազմի չվերածվեն: Մենք միշտ փորձում էինք ամեն ինչ քննարկել ու դժվարին հարցերում չխորանալ: Պարտադիր չէ, որ յուրաքանչյուր անհամաձայնության արդյունքում կունֆլիկտ բռնկվի: Կարելի է երևույթներին տարբեր կողմերից նայել ու փորձել ինդիվիդուալ ողջամիտ լուծում տալ:

Կունֆլիկտներով զբաղվող մասնագետներն անմիջապես նկատում են, թե մենք ինչով ենք միմյանցից տարբերվում: Միևնույն ժամանակ, մենք միմյանցով իսկապես հետաքրքրված ենք, ինչն

էլ, իր հերթին, օգնում է իրար լավ ճանաչել: Ինդիվիդուալ ծագում են, երբ վստահությունը փորձարկման է ենթարկվում:

Նախագծի սկզբում երկու կողմերի մասնակիցներն էլ խիստ կասկածամիտ էին: Միմյանց մասին եղած բոլոր կարծրատիպերը միանգամից ի հայտ եկան: Սակայն, ցանկության դեպքում, եթե փոքր-ինչ վստահություն և հավատ կա, հնարավոր է փակուղուց ելք գտնել: Յենց դա էլ տեղի ունեցավ մեր հայ գործընկերների հետ: Մենք տարաձայնություններից չէինք խուսափում. պարզապես, թույլ չէինք տալիս, որ դրանք ավելի բարդանան: Նորմալ մարդկանց պես՝ փորձում էինք բոլորի պահանջները բավարարող ինչ-որ լուծում գտնել:

Նախագծի ընթացքում ես սովորեցի լսել և զիջել: Չեմ վախենում ասել, որ հայ ընկեր եմ ձեռք բերել: Խաղաղաստեղծ ծրագրերում մարդիկ չպետք է բաժանվեն հայերի

ու ադրբեջանցիների: Այսպիսի ծրագրերում կարևորը ոչ թե ազգությունն է, այլ ընդհանուր գործն ու համատեղ ջանքերը: Հաջողության հասնեք, թե՛ անհաջողության, միևնույն է, միասին եք: Անհատական ջանքեր չկան: Աշխատում ենք միասին և ողջ խմբի համար: Եթե այդպես չաշխատես, հաջողության չես հասնի: Իսկապես կարևոր է ազատվել հակամարտության վերաբերյալ պարզունակ, ոչ ճիշտ և միակողմանի տեսակետներից: Եթե երևույթներին սխալ կողմից նայենք, ատելությունը միայն կաճի, նոր ստեր կծնվեն, որն էլ, իր հերթին, կազդի խաղաղարար գործընթացի, ինչպես նաև երկու կողմերի մարդկանց շփումների վրա: Կարծում եմ, որ «Կինոերկխոսություններն» օգնեցին մեզ ավելի կշռադատված տեսակետներ ունենալ:



» ՄԵՆՔ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
ՉԷԻՆՔ ԽՈՒՍԱՓՈՒՄ. ՊԱՐԶԱՊԵՍ,
ԹՈՒՅԼ ՉԷԻՆՔ ՏԱԼԻՍ, ՈՐ ԴՐԱՆՔ
ԱՎԵԼԻ ԲԱՐԴԱՆԱՆ: ՆՈՐՄԱԼ
ՄԱՐԴԿԱՆՑ ՊԵՍ՝ ՓՈՐՁՈՒՄ ԷԻՆՔ
ԲՈԼՈՐԻ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ ԲԱԿԱՐԱՐՈՂ
ԻՆՁ-ՈՐ ԼՈՒԾՈՒՄ ԳՏՆԵԼ:



ԱՐՄԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՓԱԽՍՏԱԿԱՆ», «ՉԱՐՄՈՒՅԻՆ ԿՈՎԿԱՍԻՑ» ԵՎ «Ց-ՐԴ ԿԻՆՈՄԵՏՐԻՆ» ՖԻԼՄԵՐԻ ՅԵՂԻՆԱԿ

Երբ ծրագիրը սկսվեց, մտքովս էլ չէր անցնում, որ աշխարհում ինչ-որ բան կարող է մեզ շեղել հիմնական հարցից՝ դարաբաղյան հակամարտությունից: Երբ հանդիպեցինք, բոլորը, ամբողջովին կենտրոնացած, պնդում էին իրենց սեփական տեսակետները: Երկխոսության փոխարեն՝ հակաճառում էինք:

Սակայն հետո, ընթացքում, երևացին առաջին արդյունքները: Մենք դիտեցինք առաջին ֆիլմերը, և տարօրինակն այն էր, որ թեպետ դրանք դարաբաղյան հակամարտության մասին էին, սակայն մեզ հնարավորություն տվեցին խոսել սովորական, մարդկային թեմաների շուրջ:

Ադրբեջանցիների հետ աշխատելով՝ ես մեկ անգամ ևս հասկացա, թե մեր մեջ վիրավորանքի ինչպիսի խորը զգացում է արմատացած: Երբեմն նույնիսկ ամենապարզ հարցերում չէինք կարողանում համաձայնության գալ: Յուրաքանչյուր կադր, յուրաքանչյուր բառ, յուրաքանչյուր ժեստ կարող էր թյուրըմբռնման տեղիք տալ: Երբեմն հետարտադրական քննարկումների վրա ավելի շատ ժամանակ ու եռանդ էինք ծախսում, քան՝ բուն նկարահանումների: Հաճախ ֆիլմի սկզբնական գաղափարը նկարահանումից առաջ կամ

ընթացքում փոխվում էր՝ թյուրիմացությունների կամ, գուցե, անվստահության պատճառով: Երբեմն վերջնական արդյունքն այնքան էլ հաջող չէր լինում, որքան կարող էր լինել, որովհետև ստիպված էինք լինում լավ, բայց վիճելի տեսարանները կտրել-հանել:

«Չարմուհին Կովկասից» ֆիլմը լավ օրինակ է: Նախատեսված էր, որ դա լինելու է հայ-ադրբեջանական համատեղ ֆիլմ, սակայն վերջին պահին, երբ հարթված էին բոլոր տարաձայնությունները, ու ամեն ինչ կարգավորված էր, ադրբեջանական կողմը հետ քաշվեց: Չհասկացանք, թե ինչու: Հենց ֆիլմում էլ է երևում մեր միջև եղած անվստահությունը: Հերոսուհի Չինան Ղարաբաղում ապրող ադրբեջանցի է: Նա մեկնում է Ուկրաինա՝ այցելելու հարազատներին, որոնց 16 տարի չի տեսել: Մորաբորջ տղան նրան չի ճանաչում, նստեցնում է սենյակում ու երկու ժամ հարցեր տալիս դարաբաղյան մանկության մասին, հետո միայն ընդունում է, որ դա Չինան է:

Հաջորդ համատեղ ֆիլմը՝ «Ց-րդ կիլոմետրին», նույնպես տարբերվեց Նախնական սցենարից, սակայն պատճառներն այլ էին: Նախատեսվում էր, որ այն պատերազմի արդյունքում կիսված ընտանիքի մասին պետք է լինի. հայրը

հայտնվել էր Հայաստանում, իսկ դուստրը՝ Ադրբեջանում: Պլանավորել էինք երկուսին էլ նկարահանել, ապա կազմակերպել նրանց հանդիպումը Վրաստանում՝ Թբիլիսիում: Ադրբեջանական խումբը դատերը նկարահանել էր Ադրբեջանում՝ Սումգայիթում, սակայն ես այդպես էլ չկարողացա համոզել, որ Երևանում գտնվող նրա հայրը մասնակցի նկարահանումներին: Ես գտա նմանատիպ ճակատագիր ունեցող մի կնոջ, և ստացվեց, որ ֆիլմը հակամարտության հակառակ կողմերում գտնվող երկու կանանց մասին է, որոնք չեն կարողանում շփվել իրենց հարազատների հետ: Սակայն մեր պլանավորած ընդհանուր հանդիպման դրամատիկ պահն, իհարկե, կորցրեցինք:

Սեփական ֆիլմ նկարահանելու հնարավորությունն ապշեցուցիչ էր: Իմ կարծիքով, մարդկային ցանկացած ստեղծագործություն՝ երաժշտական գործ, զեղանկար կամ ֆիլմ, առաջին հերթին ինքնանկար է: Այնպես որ, «Կինոերկխոսություններն» օգնեցին մի քայլ հետ գնալ ու կողքից գնահատել հակամարտության նկատմամբ ունեցած իմ վերաբերմունքը:



ՋՈՆԱԹԱՆ ՔՈՆԵՆ «ԿԻՆՈՆԵՐԿԻՏՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱԿԱՐ, 2005-2008

Ուժգին հակամարտության ու լրատվամիջոցների ազատության սահմանափակման միաձուլումը կարող է հավերժ թշնամության «մահացու կոկտեյլ» դառնալ: Երբ 2005թ. սկզբին Թբիլիսիում հանդիպեցի տասներկու երիտասարդ ադրբեջանցիների ու դարաբաղցի հայերի, որոնցից շատերը, տարիքի բերումով, հազիվ թե հիշեին 1988 թվականի առաջին հայ - ադրբեջանական բախումները, ինձ ապշեցրեց, թե որքան դառը կարող է լինել այդ կոկտեյլը: Խիզախության ու զայրույթի խառնուրդն էլ է յուրահատուկ կոկտեյլ: Չէ՞ որ թո հասարակությունում սատանայական իմիջ ունեցողների հետ նստել-վեր կենալը խիզախություն է պահանջում: Բայց կոկտեյլը նաև զայրույթ է պարունակում, քանի որ գոյություն ունի ծանր բեռ, որ ներկաները ցանկանում են թափել միմյանց վրա:

Սակայն երկու օր միասին անցկացնելուց հետո այդ պատանիներն արդեն ցանկանում էին ավելի շատ բան իմանալ միմյանց մասին, պարզել, թե իրենց պես երիտասարդներն ինչպես են ապրում այնտեղ՝ հակառակ կողմում: Հյուսիսային Իռլանդիայից եկած իմ գործընկերը, որը խաղաղաստեղծ գործունեության մեծ փորձ ունի, դժվարությամբ էր որոշում, թե ով է հայ, ով՝ ադրբեջանցի: Իրականում, «Կինոնեթիսոսությունների» հիմքում

ընկած է տարբերությունների աննկատելիության գաղափարը: Ղարաբաղյան պատերազմով տարանջատված մարդիկ արդեն չէին գիտակցում, թե ում հետ են կռվում, և երիտասարդները մեծանում էին՝ հակառակ կողմի մասին միայն թշնամական ու, հաճախ, ատելությամբ լցված հռետորաբանություն լսելով: Հասարակությունը և մարդիկ, ովքեր պատերազմից առաջ կարծում էին, թե միմյանց մասին շատ բան գիտեն, իրենց տեղեկությունները չափից շատ էին գտել ու կառչել էին բացասական կարծրատիպերից՝ մի կողմ նետելով դրական հիշողությունները:

Բաբվի, Ստեփանակերտի ու Երևանի գործընկերների ուսումնասիրած աղոտ հարցերը սկսեցին որոշակիանալ: Երբ երիտասարդները հնարավորություն են ունենում իրենց մասին, իրենց համայնքների, հուզող հարցերի մասին պատմող ֆիլմեր արտադրել, նրանք կարողանում են միմյանց հետ խոսել շարժվող պատկերների թարմ լեզվով: Պատկերներ, որոնց «շարժումը» թե՛ հուզական ավելորդում է առաջացնում, թե՛ ընկալումների փոփոխություն:

Երբ մի քանի ամիս անց կրկին հանդիպեցինք մոնտաժած առաջին կադրերը նայելու, սենյակում այլևս նախկին լարվածությունը չկար: Ոչ բոլորն էին ընկերացել, միայն մի

մասը: Միմյանց ֆիլմերը դիտելն ու քննադատելն իսկական մարտահրավեր էր բոլորի համար: Սա երկխոսություն էր հակամարտության մասին, սակայն՝ ֆիլմերի միջոցով և փոքր շրջանակում: Ավելի ուշ՝ երկխոսությունը տարածվեց, որովհետև ֆիլմերը սկսեցին ցուցադրվել նաև հեղինակների փոքր շրջանակից դուրս: Սակայն ներկայիս իրավիճակում հեղինակները չեն կարող իրենց ֆիլմերը տանել-հասցնել մյուս կողմին: Արդեն ֆիլմերը պետք է խոսեն իրենց անուկից: Հենց դա էլ առաջացրեց այս ձեռնարկի անհրաժեշտությունը. ձեռնարկ, որը դիտողին (անհատապես կամ համայնքի ներսում) բազմազան հարցեր է տալիս՝ ակներև, նրբանկատ կամ հուկից հանող: Այս կերպ «Կինոնեթիսոսությունները» ջրբաժանի վրա կամուրջ են գցում և խթանում երկխոսությունը համայնքների ներսում: Մեծ ձգտումներ ունեցող երիտասարդ հեղինակների ու նրանց ուսուցիչների հաստատակամության և ստեղծագործ մոտեցման շնորհիվ՝ Թբիլիսիի առաջին հանդիպման անհարմար լուրջությունը վերածվել է հարյուրավոր հայերի ու ադրբեջանցիների միջև զրույցի:



ԼՈՒՄԻՆԵ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

«ԲՈԼՈՐ ՖԻԼՄԵՐՆ ԷԼ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ ԵՆ» ԵՎ «ԷԳՈ» ՈՃՈՎ» ՖԻԼՄԵՐԻ ՅԵՂԻՆԱԿ

Յենց որ լսեցի Նախագծի մասին, հասկացա, որ ցանկանում եմ մասնակցել: Ես իսկապես ուզում էի ինչ-որ նոր բան սովորել: Աստիճանաբար սովորեցի «Նկարահանում», «մոնտաժ», «ձայնագրում»՝ նոր, կախարդական բառերի իմաստները: Սկսեցի սովորել հեռուստատեսային նյութեր, ապա՝ վավերագրական ֆիլմեր պատրաստելու գաղտնիքները և քայլ առ քայլ սկսեցի հասկանալ այս աշխատանքի էությունը: Ինձ ամեն ինչ հետաքրքրում էր. գաղափարի քննարկումը, գլխավոր հերոսների ընտրությունը և, ամենից շատ, նրանց ճանաչելու գործընթացը:

Նրանցից յուրաքանչյուրն իր պատմությունն ուներ՝ դժվարին, երջանիկ կամ տխուր: Մենք տարբեր մարդկանց հետ էինք աշխատում, և նրանցից յուրաքանչյուրի անհատականությունը բացահայտվում էր ֆիլմի ընթացքում: Նկարահանման ժամանակ երբեմն հազիվ էինք կարողանում մեր արցունքները զսպել, երբ նրանցից մեկը խոսելու ընթացքում հանկարծ հուզվում էր: Դա այդպես էր, հատկապես, երբ նկարահանում էինք «Բոլոր ֆիլմերն էլ սիրո մասին են» կինոնկարը: Այդ ֆիլմն ինձ համար շատ կարևոր է, որովհետև ես առաջին անգամ էի հանդիպում ադրբեջանցի կնոջ, որն

իր հայ ամուսնու հետ ապրում է Ղարաբաղում. նրանք երջանիկ ու սիրող ամուսիններ են: Ուզում էի նրան ավելի լավ ճանաչել, հասկանալ այդ կնոջն առօրյան ու ավանդույթները, իմանալ, թե ինչ է մտածում:

Նախքան նկարահանումները՝ որոշել էի, որ ֆիլմը պետք է և՛ հայերին դուր գա, և՛ ադրբեջանցիներին, դրական զգացմունքներ առաջացնի: Ազդեսիա կամ լարվածություն չէի ուզում: Չէի ուզում որևէ մեկին վիրավորել: Ամեն դեպքում, ֆիլմիս հերոսուհին շատ լավ մարդ է՝ բարի, համբերատար, սիրող: Նրա կյանքը լի էր



ողբերգական պահերով, բայց նաև՝
ռոմանտիկ սիրային պատմությամբ:
Երբ այդ մասին պատմում էր, աչքերը
փայլում էին: Նկարահանումներից
հետո զգացի, որ կարծես ավելի լավ
մարդ եմ դարձել, ավելի հանդուրժող
ու բարի:

Նախագիծն առանձնահատուկ էր,
որովհետև ադրբեջանցիների հետ
էինք աշխատում: Կարողացանք
Նրանց ավելի լավ ճանաչել,
հասկանալ, թե Ադրբեջանում ինչ է
կատարվում, լրատվամիջոցների
աշխատակիցներն ինչ պրոբլեմներ
ունեն: Մեր զրույցներն ու
քննարկումները փոխեցին

ադրբեջանական մամուլի և այնտեղի
լրագրողների աշխատանքի մասին
տպավորություններս: Դա օգնեց ինձ
հասկանալ, թե Ադրբեջանում
հակահայկական քարոզչությունն
ինչու է այդքան տարածված: Եվ դա
ինձ թույլ տվեց գնահատել այն
հարաբերական ազատությունը, որ
մենք ունենք:

Ադրբեջանցիների հետ զրույցելիս
խնդիրներ չէինք ունենում, եթե,
իհարկե, չէինք սկսում խոսել
հակամարտության մասին: Զեկ
հասնում էինք կարևոր հարցերին՝
սկսում էինք վիճել: Նախագծի
վերջում առանձնապես չէինք շփվում

իրար հետ: Անձամբ ինձ համար մեր
հարևանների հետ ընկերանալն ու
Նրանց հետ համագործակցելը մեծ
փորձառություն էր: Ցավոք,
առանձնապես չզգացի, թե իմ
ադրբեջանցի ընկերները
կցանկանային շարունակել մեր
շփումները:



ԽԱԼԻԴԱ ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ «ԱՄՈՒՐ ԸՆԿՈՒՅՉ» ՖԻԼՄԻ ԳԼԽԱԿՈՐ ՅԵՐՈՍԸ

Մենք ապրում էինք ժամանակավոր կացարանում, շատ վատ պայմաններում: Ես տարբեր տեղերում պահակ էի աշխատում, երեխաներս էլ դասերից հետո ինձ օգնում էին: Այն ժամանակ ամուսինս աշխատել չէր կարող: Մեզ ընկույզի մուրաբան էր պահում: Թեպետ, երբ առաջին անգամ մուրաբա եփեցի, այդ մասին չէի մտածում: Ամեն դեպքում, լավ ժամանակներ էին...

«Ամուր ընկույզ» ֆիլմից հետո ամեն ինչ փոխվեց: Եթե լրագրող էմմա Բալայանը ֆիլմը չտեսներ ու չգար ինձ հետ զրուցելու, մեր դժվարություններն ավելի երկար կտևեին: Յենց որ նրա հոդվածը լույս տեսավ, զանգահարեցին Ստեփանակերտի քաղաքապետարանից և ինձ ու ամուսնուս կանչեցին զրույցի: Ապշեցի, երբ ասացին, որ մեզ քաղաքի կենտրոնում բնակարան են տալիս: Ուրախությունս չէի կարողանում զսպել: Ու, առաջին հերթին, ֆիլմի մասին մտածեցի:


Երեկվա պես հիշում եմ այն օրը, երբ հանդիպեցի նկարահանող խմբին: Ես միշտ էլ մի քիչ ամաչկոտ եմ եղել, բայց ռեժիսորն ինձ անընդհատ շեղում էր, և ես տեսախցիկների մասին մոռանում էի: Ինձ թվում էր, թե պարզապես հարազատներիցս մեկի հետ եմ զրուցում:

Սկզբում երեխաներս դեմ էին այդ գաղափարին. չէին ուզում, որ իրենց դասընկերները տեսնեն, թե ինչ սիավոր պայմաններում ենք ապրում: Բայց ես նրանց ասացի, որ ամաչելու բան չկա: Ասացի, որ մենք գողություն չենք անում, պարզապես աշխատում ենք, որ մեր օրվա հացը վաստակենք: Նաև ասացի, որ եթե մարդիկ իմանան, թե իրենց հոր հետ ինչ է պատահել, ինչպես են նրան պատերազմի ժամանակ գերի վերցրել, կսկսեն հասկանալ, թե պատերազմն ինչպիսի դաժան հետևանքներ կարող է ունենալ: Երեխաները համաձայնեցին: Ուրախ եմ, որ կարողացա բոլորին համոզել. հիմա տեսնում եմ, որ իսկապես արժեր:

Ո՞վ կմտածեր, որ ֆիլմն այսպես կփոխի մեր ընտանիքի կյանքը: Եթե

միայն ֆիլմերը կարողանային կյանքի բոլոր դժվարությունները հարթել...

Այդ ֆիլմերը բոլորիս՝ թե՛ հայերի, թե՛ ադրբեջանցիների համար էլ կարևոր են: Մարդիկ պետք է հասկանան, որ պատերազմը մեծ կորուստներ է բերում: Կյանքեր են փշրվում. հողը պաշտպանող երիտասարդ զինվորների, իրենց երեխաներին հողին հանձնող մայրերի, որբացած երեխաների, այրիացած կանանց... Վերջին հաշվով, բոլորս էլ մահկանացու ենք և բոլորս էլ ապրում ենք կողք կողքի: Ոչ թե պետք է պատերազմենք, այլ պետք է փորձենք միմյանց հետ նորմալ հարաբերություններ ստեղծել:



» ՎԵՐՋԻՆ ՅԱԾԿՈՎ, ԲՈԼՈՐՍ ԷԼ ՄԱՐԿԱՆԱՑՈՒ ԵՆՔ ԵՎ ԲՈԼՈՐՍ ԷԼ ԱՊՐՈՒՄ ԵՆՔ ԿՈՂՔ ԿՈՂՔԻ: ՈՉ ԹԵ ՊԵՏՔ Է ՊԱՏԵՐԱԶՄԵՆՔ, ԱՅԼ ՊԵՏՔ Է ՓՈՐՁԵՆՔ ՄԻՄՅԱՆՑ ՅԵՏ ՆՈՐՄԱԼ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՍԵՂԾԵԼ:



ՌԱՅԻՄ ՅԱԶԻԼԻ

«ԻՆՉ ԵՆՔ ՄԵՆՔ ՈՒԶՈՒՄ» ՖԻԼՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐՈՍԸ

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Ինտերնյուս Ադրբեջանից ինձ գանգահարեցին ու խնդրեցին մասնակցել «Դալգայի» մասին նկարահանումներին (ես այդ կազմակերպության հիմնադիրներից եմ): Մենք դա խմբով քննարկեցինք ու համաձայնեցինք: Նկարահանող թիմի հետ իսկապես լավ էինք լեզու գտնում: Նրանք հարցրին՝ արդյո՞ք մեզվից որևէ մեկի վրա ուղղակիորեն ազդել է դարաբաղյան հակամարտությունը: Ես անուններ տվեցի, բայց հետո նրանք պարզեցին, որ ես էլ եմ դրանցից մեկը: Տարօրինակ է, բայց մարդկանց մեծ մասի մտքով չի էլ անցնում, որ ես կարող եմ փախստական լինել: Ինձ առաջարկեցին, որ ֆիլմն իմ մասին լինի, ես էլ համաձայնեցի:

Ավստրալիայում է, որ վավերագրական ֆիլմը պետք է փաստերի վրա հիմնված լինի, բայց ես գիտեի, որ իմ պատմածի մի մասը որոշ մարդկանց անհավատալի կթվա: Երբ մարդիկ նայում են ինձ և ընկերներին, նայում են իմ ապրելակերպին, նրանք սովորական մարդ են տեսնում: Բայց փաստն այն է, որ ես այնպիսի բաների միջով եմ անցել, որ իրականում շատ հեռու եմ սովորական լինելուց:

Մի քիչ բարդություններ ունեի՝ այս ամենի հետ կապված: Նկարահանման ընթացքում անընդհատ ինքս ինձ

հարցնում էի. «Ինչպե՞ս կարող եմ այլ երկրներում ապրող մարդկանց ապացուցել, որ պատմածներս ճիշտ են և իրական»: Բացի այդ, չէի ուզում կյանքից ճնշված մարդու տպավորություն թողնել, չէի ցանկանում, որ ինձ խղճան: Զեկց այդ պատճառով է, որ չեմ սիրում անցյալիս մասին խոսել: Ինչ որ է, արդեն խոստացել էի ու պիտի անցնեի դրա միջով: Բայց պիտի խոստովանեմ, որ երբեմն հպարտությունս թույլ չէր տալիս անցյալիս որոշ դեպքերի մասին խոսել: Կարծում եմ, որքան արագ հաղթահարես ճակատագրի դժվարությունները, այնքան հեշտությամբ կկարողանաս կյանքդ քո ուզած ձևով ապրել:

Ֆիլմը երկու առումով է ինձ համար առանձնահատուկ: Նախ, հիշեցնում է այն ամենը, ինչ ես ուզում եմ մոռանալ: Եվ հետո, այն հորս մասին է հիշեցնում: Երբ սկսեցինք նկարահանել, հայրս արդեն հիվանդ էր, և ես ռեժիսոր Էլչան Մամմադովին խնդրեցի, որ հայրս էլ լինի ֆիլմում: Նա խնդրանքս կատարեց, բայց երբ ֆիլմն արդեն պատրաստ էր, հայրս մահացավ...

Համոզված եմ, որ ամենահետաքրքիր սցենարները իրական պատմություններն են, իսկ ամենալավ պատմություններն անսովոր

փորձություններից են ծնվում: Կուզե՞նայի «Ինչ Ենք Մենք Ուզում» ֆիլմի որչ անձնակազմին շնորհակալություն հայտնել և հույս ունեն, որ ֆիլմը դիտած յուրաքանչյուր մարդ իսկական խաղաղասեր կդառնա:



ԱՎԱԶ ՀԱՍԱՆՈՎ

«ԻՄ ԹՇՆԱՄԻՆ՝ ԻՄ ԸՆԿԵՐԸ» ՖԻԼՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐՈՍԸ

Ինտերնյունս առաջարկեց, որ ես իմ հին բարեկամ Ալբերտ Ոսկանյանի հետ մասնակցեմ ռազմագերիների և պատանդների մասին ֆիլմի նկարահանումներին: Պիտի ասեմ, որ բոլորովին համոզված չեի, որ դա լավ գաղափար է: Ես միշտ զգուշացել եմ այդ թեմայով հանրային քննարկումներից, այնպես որ, երկար ժամանակ ծանրութեթե էի անում առաջարկը: Հանդարտվեցի, երբ իմացա, որ ֆիլմը միայն անհայտ կորածների հետ կապված մեր աշխատանքի մասին չի լինելու, այլ ներկայացնելու է, թե մենք ինչպես ենք միասին աշխատում, թե ես ու Ալբերտը մարդկային առումով ինչպես ենք լեզու գտնում: Դրան ես համաձայն էի:

Սակայն նկարահանվող առաջին տեսարանից դժգոհ էի: Ես հավատում եմ խաղաղարար գործընթացին, ընդունում եմ հանդուրժողականության կարևորությունը, սակայն ռեժիսորը ցանկացավ ինձ նկարահանել Շահիդների ծառուղում, որը դարաբաղյան պատերազմում զոհված աղբբեջանցիների հուշահամալիրն է: Սցենարի համաձայն՝ ես քամու և անձրևի տակ քայլում էի ծառուղու երկայնքով, իսկ երկու օպերատորներն ինձ նկարահանում էին: Բայց ցուրտն ու պատերազմում զոհվածների լուսանկարներն ինձ խանգարում էին կենտրոնանալ: Ռեժիսորին հարցրի,

արդյոք կարո՞ղ եմ այլ վայրում շարունակել նկարահանումը, և կարո՞ղ եմ ինձ կենտրոնանալու համար ժամանակ տրամադրել: Հետարտադրական գործընթացի ժամանակ պարզվեց, որ ռեժիսորն էլ գոհ չէ նկարահանումներից: Լարվածությունս նվազեց, երբ այդ մասին իմացա: Դա մեզ թույլ տվեց աշխատանքի որակը բարձրացնել ու նաև մի շարք նոր տեսարաններ ավելացնել:

Ալբերտին առաջին անգամ 2000 թվականին եմ հանդիպել: Եթե նա որևէ մեկին ընկեր է համարում, նրա համար ամեն ինչ կանի: Նա նաև իր գործում շատ հմուտ է: Ես դա իմ աչքերով եմ տեսել մեր համատեղ աշխատանքի ընթացքում, հատկապես՝ Հայաստան ու Ղարաբաղ կատարած այցելություններիս ժամանակ: Սակայն ռազմագերիների ու պատանդների թեման ինձ համար լրիվ նոր էր: Ես դրա միջով անցած, փրկված ու տուն վերադարձած մարդկանց հետ լուրջ շփում չէի ունեցել, քանի որ, ավելի շուտ, զբաղվում էի մարդու իրավունքներով և բռնի տեղահանման հարցերով: Նախկին ռազմագերիների հետ շփման փորձն ավելի քան օգտակար եղավ ինձ համար:

Ֆիլմում ցանկանում էի ցույց տալ, որ յուրաքանչյուր մարդ խաղաղ հարաբերությունները վերականգ-

նելու ներուժ ունի, և որ ազգամիջյան խնդիրներին կարելի է մարդասիրաբար մոտենալ: Շնորհակալ եմ, որ պրոդյուսերները կարողացան մեր օրինակների միջոցով ցույց տալ, թե ինչպես կարելի է մարդկանց մտածելակերպ ներթափանցած թշնամու կարծրատիպը հաղթահարել և ինչ-որ ձևով մերժել այն սուտ հորինվածքները, որոնք այնքան տարածված են հասարակության որոշ հատվածներում:

Ուզում էիք ցույց տալ, թե ինչպես է թշնամու կարծրատիպը մթազնում հայերի ու աղբբեջանցիների միջև եղած դարավոր բարեկամությունը: Ուրախ եմ, որ ֆիլմի նախնական անվանումը չփոխվեց. չէ՞ որ այն անխուսափելիորեն ինչ-որ զուգորդումներ է առաջացնում՝ նույնիսկ միջև ֆիլմը դիտելը: Համոզված եմ, որ ֆիլմը դիտելով, մարդիկ իրենց սեփական հետևությունները կանեն բարեկամության ու ատելության, թշնամիների ու ընկերների մասին:



ԱԼԲԵՐՏ ՈՍԿԱՆՅԱՆ

«ԻՄ ԹՇՆԱՄԻՆ՝ ԻՄ ԸՆԿԵՐԸ» ՖԻԼՄԻ ԳԼԽԱԿՈՐ ՅԵՐՐՈՍԸ

Նկարահանումների ընթացքում մենք գնացինք հսկողության գծի մոտ, որտեղ առաջ գերիների փոխանակումներ էինք կատարում: Հանկարծ հիշողությունները պատեցին ինձ. կարծես երեկ լիներ: Հիշեցի այն պահը, երբ դիպուկահարի ու հրետակոծության արանքում էի հայտնվել: Հետո այն պահը, երբ քիչ էր մնում, որ ինձ էլ պատանդ վերցնեին: Մանրամասները մոռացել էի: Բայց երազում հաճախ տեսնում եմ այն հայերին ու ադրբեջանցիներին, որոնց կարողացել ենք փոխանակել:

Ես խաղաղարար եմ, և ինձ համար խիստ կարևոր է մարդկանց ցույց տալ, որ պատերազմը վատ բան է: Մարդիկ շահմատային ֆիզուրներ չեն: Նրանք կենդանի էակներ են, ովքեր կարող են մի ակնթարթում սպանվել, գերեզմարվել կամ անհայտ կորչել: Ես իմ առջև խնդիր չեի դրել այդ գաղափարը ֆիլմում ներկայացնել: Պարզապես, ես այդպես եմ տեսնում երևույթները: Ես այդպես եմ մտածում և զգում:

Համոզված եմ, որ մեր հակամարտությունը միայն խաղաղ ճանապարհով կարող է լուծվել: Չենք կարող թույլ տալ, որ էլի արյուն թափվի: Պատերազմում հաղթողներ չեն լինում:

Երբ ինձ խնդրեցին մասնակցել ֆիլմի նկարահանումներին, սկզբում մերժեցի: Բայց հետո սկսեցի մտածել, որ պատմությունն այնպես է աղավաղում ճշմարտությունը, որ


վերջում չես էլ հասկանում, թե ինչ է կատարվել: Մտածեցի, որ այս ֆիլմը հնարավորություն կտա վերհիշել իրական իրադարձություններն ու խոսել կոնկրետ փաստերի ու դեպքերի մասին: «Իմ թշնամին՝ իմ ընկերը» մի հազվագյուտ ֆիլմ է այն մարդկանց մասին, ովքեր զբաղվել են երկու կողմերի ռազմագերիների ու պատանդների փոխանակմամբ: Մարդիկ ֆիլմին տարբեր ձևով են արձագանքում, բայց դա բնական է, կյանքն է այդպիսին:

Ես ցանկանում էի խոսել Ղարաբաղի՝ պատանդների, ռազմագերիների ու անհայտ կորածների պետական հանձնաժողովի մասին: 1993-97 թվականներին ես հանձնաժողովի նախագահի տեղակալն էի և գերիների փոխանակման պատասխանատուն: Այդ ընթացքում մեզ հաջողվել է փոխանակել ավելի քան 500 մարդու: Անձամբ ես՝ ավելի քան 300 գերի եմ փոխանակել: Աստված պահպանել է նրանց կյանքը, և իմ օգնությամբ նրանք փոխանակվել են:

Մենք կարողացել ենք մեր առաքելությունն իրականացնել Ղարաբաղի ու Ադրբեջանի միջև գոյություն ունեցող կապերի շնորհիվ: Այդ շփումները, որոնք մեզ համար խիստ անհրաժեշտ են, այժմ գոյություն չունեն: Սակայն դեռ շատ ընդհանուր պորբլեմներ ունենք, և դրանք պետք է միասին լուծել: Զաղաքացիական հասարակության մակարդակի շփումները կարևոր են, բայց վատ չէր լինի՝ պետական մակարդակի շփումներ էլ ունենալ:

Այսօր մեր միջև սահման կա, բայց չէ՞ որ «մորեխներն ու փամփուշտները» սահման չեն ճանաչում:

Հակամարտող երկու կողմերի հանրությունների հետ էլ պետք է աշխատանքներ տարվեն, որպեսզի փորձենք ազատվել տարիների ընթացքում ստեղծված թշնամու կարծրատիպերից: Պետք է հետաքրքրվենք միմյանցով ու փորձենք միմյանց հասկանալ:



» ՊԵՏՔ Է ՀԵՏԱԶԵՐԹՐԿԵՆՔ ՄԻՄՅԱՆՑՈՎ ՈՒ ՓՈՐՁԵՆՔ ՄԻՄՅԱՆՑ ՀԱՍԿԱՆԱԼ:

ՄԱՍ 2

ԿԻՆՈԴԻՏՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

» ՄԵՆՔ, ՍՈՎՈՐԱԲԱՐ, ԶԵՆՔ
ՍԻՐՈՒՄ ԿԱՍԿԱԾԻ ՏԱԿ ԱՌՆԵԼ
ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆՎԻՃԵԼԻ
ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ
ՀԱՄՈՉՄՈՒՆՔՆԵՐԸ:





ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ

Տեխնիկական լավ նախապատրաստությունն անչափ կարևոր է, բայց հաճախ է անտեսվում: Չէ՞ որ դուք հանրության համար եք կազմակերպում կինոդիտումը, և ձեզ անհրաժեշտ է լսարանի ուշադրությունը: Մարդիկ պետք է կինոդիտումից հաճույք ստանան, հասկանան, թե ֆիլմերն ինչի մասին են ու կարողանան իրենց տեսածը քննարկել: Այսպիսով, լսարանի հարմարավետությունը նույնքան կարևոր է, որքան գործընթացի յուրաքանչյուր փուլ:

ՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կինոդիտման համար համապատասխան վայր ընտրեք ու նախօրոք զննեք այնտեղ: Եթե որևէ պատճառով դա հնարավոր չէ (ասենք, հեռավորության խնդիր կա), այդ վայրում գտնվող ձեր գործընկերներին խնդրեք, որ օգնեն կազմակերպել կինոդիտումը: Եթե ստիպված եք ընտրություն կատարել՝ առանց վայրը տեսնելու, խնդրեք, որ ձեր գործընկերներն ուղարկեն առկա տարբերակների լուսանկարները: Կինոդիտում կարելի է կազմակերպել կինոսրահներում, թատրոններում, դպրոցներում, երիտասարդական կենտրոններում, հյուրանոցներում կամ սրճարաններում: Միջոցառումը կարելի է անցկացնել ամենուր, նույնիսկ՝ փոքր գյուղերում, սակայն միշտ չէ, որ հնարավոր է լինում իդեալական վայր գտնել: Կինոդիտման վայրն ընտրելիս՝ նկատի ունեցեք հետևյալը.

» Սրահը պետք է բավականաչափ ընդարձակ լինի, աթոռներն էլ՝ համապատասխան են մարդկանց բանակությանը:

» Սրահի ջերմաստիճանը պետք է համապատասխանի տարվա եղանակին, չէ՞ որ մարդիկ ստիպված են լինելու որոշ ժամանակ նստած մնալ:

» Սրահում պետք է լինի նորմալ օդափոխություն, կամ էլ օդորակիչներ աշխատեն:

» Եթե ձեր Էկրանն էք օգտագործելու, համոզվեք, որ այն տեղադրելու համար բավականաչափ տեղ կա:

» Էլեկտրական վարդակները պետք է հարմար տեղադրված լինեն:

» Սրահը պետք է հնարավոր լինի կինոդիտման ընթացքում մթնեցնել, իսկ քննարկման ժամանակ՝ լուսավորել:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ

Իդեալական տարբերակում՝ երկու հոգով պետք է աշխատեք, և ձեզնից մեկը պետք է անհրաժեշտ տեխնիկական հմտություններ ունենա: Ձեզ հարկավոր են.

» DVD նվազարկիչ և/կամ շարժական համակարգիչ՝ սկավառակ դիտելու կամ ֆիլմերը կոշտ սկավառակի (hard drive) հիշողության մեջ պահելու հնարավորությամբ,

» համապատասխան որակի և բարձրության ձայն ապահովող բարձրախոսներ,

» DVD նվազարկիչն կամ շարժական համակարգիչն միացող պրոյեկցիոն սարք,

» ծալովի Էկրան կամ այլ հարթ սպիտակ մակերևույթ, որի վրա հնարավոր է ֆիլմ ցուցադրել,

» չորս սարքի համար նախատեսված երկարացնող լար կամ եռակողմ ադապտեր,

» բոլոր սարքերի մալուխները,

» թվային տեսասկավառակներ կամ այլ միջոցներ՝ տեսագրված ֆիլմերով:

Անակնկալ պրոբլեմներից խուսափելու նպատակով՝ լավ կլինի վերցնել և՛ բուն տեսասկավառակները, և՛ ֆիլմերի պահեստային պատճենները՝ համակարգչի հիշողության և/կամ շարժական սկավառակի վրա պահպանված:

Նախքան կինոդիտումը միշտ ստուգեք՝ արդյո՞ք որջ տեխնիկան աշխատում է: Եթե կարող եք, ձեռքի տակ ունեցեք պտուտակահան, դանակ և կպչուն մեկուսիչ ժապավեն. դրանք երբեմն խիստ օգտակար են լինում:

Այնպես արեք, որ կինոդիտման սենյակը միջոցառումից կես ժամ առաջ արդեն պատրաստ լինի:

Եթե հնարավոր է, թեթև հյուրասիրություն կազմակերպեք (թեյ, սուրճ, թխվածքաբլիթներ կամ մրգեր): Լսարանը շունչ քաշելու և ոչ պաշտոնական մթնոլորտում շփվելու հնարավորություն կունենա: Դա կօգնի հաղթահարել հոգեբանական պատենշները և ավելի ազատ քննարկմամբ ավարտել դիտումը:



ԻՆՉՊԵՍ ՎԱՐԵԼ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Քննարկումը վարում է մոդերատորը: Չենց նա էլ սահմանում է բանավեճի կանոններն ու հսկում, որ դրանք պահպանվեն: Հատկապես կարևոր է, որ դուք՝ որպես մոդերատոր, հասկանաք հակամարտության խաղաղ լուծմանն աջակցողի ձեր դերն ու նպատակը և ըստ այդմ դրսևորեք ձեր պահվածքը, խոսելաժողովն ու տոնայնությունը:

Մոդերատորի հիմնական գործառնությունը մարդկանց օգնելն է, որպեսզի նրանք կարողանան իրենց կարծիքն արտահայտել ֆիլմերի, դարաբաղյան հակամարտության առաջադրած հիմնախնդիրների, ինչպես նաև այն մասին, թե ինչպես կարելի է այդ իրավիճակից դուրս գալ: Փորձեք լսարանին առավելագույն ազատություն տալ ու ստեղծել այնպիսի մթնոլորտ, որտեղ բոլոր մասնակիցները կարող են հանգիստ արտահայտել իրենց կարծիքը. չէ՞ որ մտորելու համար հանդարտ իրավիճակ է անհրաժեշտ: Սակայն աշխատեք խուսափել ձեր սեփական կարծիքն արտահայտելուց, մարդկանց պարտադրելուց կամ անուղղակի կերպով ակնարկելուց:

Հարցերը լսարանն ակտիվացնելու հիմնական գործիքներն են: Մենք առաջարկում ենք մի շարք ընդհանուր հարցեր, ինչպես նաև մոտ 10 հարց՝ յուրաքանչյուր ֆիլմի համար: Իհարկե, այդ հարցերը սպառնիչ չեն, և դուք միշտ կարող եք դրանք լրացնել կամ փոխել: Հաճախ լսարանն էլ է առաջարկներ անում, և մասնակիցներն իրենք հարցեր են առաջադրում:

Չենց սկզբից սահմանեք քննարկման կանոնները: Բոլորին ինտրոքե անջատել բջջային հեռախոսները: Այնպես արեք, որ յուրաքանչյուրն արտահայտվելու համար բավականաչափ ժամանակ ունենա: Չսկեք, որ յուրաքանչյուր միջամտություն տևի առավելագույնը 5 րոպե: Այնպես արեք, որ հնարավորինս շատ մարդիկ կարողանան արտահայտվել: Թույլ մի՛ տվեք, որ ամենակտիվ մասնակիցները երկար մենախոսեն:

Հաճախ լսարանում ի հայտ է գալիս ինքնակոչ առաջնորդ, որը երբեմն բացասական դեր է ստանձնում՝ թելադրելով քննարկման տոնայնությունն ու թույլ չտալով, որ մյուսներն էլ խոսեն կամ այլ կարծիքներ արտահայտվեն: Այս ոչ պաշտոնական առաջնորդը երբեմն կարող է «նիստը նախագահել», և դուք, որպես մոդերատոր, պետք է իրավիճակի վերահսկումը չկորցնեք: Կարող եք երբեմն մեղմորեն ընդհատել, երբեմն՝ թույլ տալ, որ այլ տեսակետ ունեցողներն էլ ելույթ ունենան: Ամբողջ ընթացքում պետք է չեզոք դիրք ունենաք. վեճի չբռնվեք, ինքնատիրապետումը չկորցնեք և ձայնը չբարձրացնեք:

ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՊԱՏՐԱՍԿՎԵԼ ԿԻՆՈՂԻՏՄԱՆԸ

Մոդերատորները պետք է ինամբոլ նախապատրաստվեն յուրաքանչյուր կինոդիտման և քննարկման: Նախևառաջ, պետք է ընթերցել հետևյալ նյութերը.

- » «Կինոերկխոսությունների» նախապատմությունը
- » ֆիլմերի հեղինակների ու գլխավոր

հերոսների ակնարկներն ու հարցազրույցները

- » ֆիլմերից յուրաքանչյուրի համառոտ նկարագրությունը:

Որպես մոդերատոր՝ դուք պետք է ֆիլմերը նախօրոք դիտեք: Եթե հնարավոր է, շփվեք հեղինակների հետ, պարզեք ֆիլմերի ստեղծման մանրամասները, ինչպես նաև հերոսների նախապատմությունը: Պետք է պատրաստ լինեք լսել բազմազան, երբեմն՝ անսպասելի հարցեր: Պետք է իմանաք դարաբաղյան հակամարտության և խաղաղարար գործընթացի պատմությունը, որպեսզի կարողանաք ֆիլմերը ներկայացնել ավելի լայն սոցիալական ու քաղաքական համատեքստում, քանի որ լսարանի որոշ անդամներ կարող են կասկածամիտ կամ անբարյացակամ վերաբերմունք դրսևորել: Այս ձեռնարկը պարունակում է որոշ աղբյուրներ, որոնք կարող են ձեզ այդ հարցերում օգնել, օրինակ՝ հակամարտության վերաբերյալ քաղաքական տերմինների բառարան:

Կինոդիտումները պետք է կազմակերպել ըստ նախօրոք մտածված պլանի: Պլանը կարող է այսպիսին լինել.

- » մոդերատորների հակիրճ պրեզենտացիան
- » տեղեկատվություն՝ նախաձեռնության և ֆիլմերի մասին
- » մեկ-երկու հարց, որոնք լսարանին կօգնեն ներգրավվել թեմայի մեջ և «աշխուժանալ»

» ՈՐՊԵՍ ՄՈԴԵՐՆԱՏՈՐ՝ ՊԵՏՔ Է ՅԱՍԿԱՆԱՔ ՅԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂ ԼՈՒԾՄԱՆ ԱԶԱԿՑՈՂԻ ՁԵՐ ԴԵՐԸ ԵՎ ԸՍՏ ԱՅԴՄ ԴՐՍԵՎՈՐԵՔ ՁԵՐ ՊԱՅՎԱԾՔԸ, ԽՈՍԵԼԱՌԾՆ ՈՒ ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ:

- » առաջին ֆիլմի ցուցադրությունը
- » քննարկում
- » երկրորդ ֆիլմի ցուցադրությունը
- » քննարկում
- » ընդմիջում
- » երրորդ ֆիլմի ցուցադրությունը
- » քննարկում
- » ամփոփում
- » ոչ պաշտոնական գրույց:

Կարելի է նաև սկզբից ֆիլմերը դիտել, ապա բոլորի վերաբերյալ ընդհանուր քննարկում անցկացնել: Ընտրեք ամենահարմար ձևաչափը՝ ըստ լսարանի նախապատվությունների ու կարիքների: Երբեմն ամենալավ տարբերակը իմպրովիզացիան է, և մոդերատորը պետք է դրան պատրաստ լինի:

ՖԻԼՄԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեկ միջոցառման ընթացքում կարելի է ցուցադրել երեք ֆիլմ: Խորհուրդ կտայինք յուրաքանչյուր միջոցառման ընթացքում ցուցադրել մեկ հայկական, մեկ արդբեջանական և մեկ համատեղ ֆիլմ: Եթե զգում եք, որ լսարանը հոգնել է, կարող եք երկու ֆիլմից հետո ծրագիրն ընդհատել: Սա ձեզ թույլ կտա պահպանել ցուցադրված ֆիլմերի «հավասարակշռությունը» և այդպիսով պահպանել նախաձեռնության հիմնական գաղափարը՝ հակամարտության տարբեր կողմերի տեսակետների շուրջ կառուցված երկխոսությունը:

Ֆիլմերի ընտրությունը կարող է փոփոխվել՝ կախված լսարանից:

ՖԻԼՄԵՐ ՏԱՐՔԵՐ ԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՅԱՄԱՐ

Երիտասարդների համար. «Էգո» ռճով» և «Դաունլոդը» կարող են

օգտակար լինել, քանի որ գլխավոր հերոսներն իրենք երիտասարդ են:

Եթե լսարանում փախստականներ կան. «Քաղաքացիությունը՝ փախստական», «Չարմուհին Կովկասից», «13 տարի անց»:

Եթե լսարանում մեծ մասամբ կանայք են՝ «Ամուր ընկույզ» և «8-րդ կիլոմետրին»:

Եթե լսարանում վետերաններ կան. «Վերածնունդ» և «Ճակատագիրը թակում է դուռը»:

Ստորև կգտնեք ֆիլմերի համադրությունների ընդհանուր ցուցակ, որն առաջարկվում է, սակայն ամենևին չի պարտադրվում: Կարևորն այն է, որ պահպանեք հայկական ու արդբեջանական ֆիլմերի հավասարակշռությունը. ֆիլմերի ընտրության հարցում այլ կանոններ չկան: Պարզապես հաշվի առեք լսարանը և հանգամանքները, ինչպես նաև վստահեք ձեր բնազդին:

- » «Բզեզակերները» / «Դարաբաղյան հեքիաթ» / «Քամանչա-Նամե»
- » «13 տարի անց» / «Քաղաքացիությունը՝ փախստական» / «8-րդ կիլոմետրին»
- » «Բոլոր ֆիլմերն էլ սիրո մասին են» / «Շուշին վրանի տակ» / «Սպեկտր»
- » «Ճակատագիրը թակում է դուռը» / «Վերածնունդ» / «Իմ թշնամին՝ իմ ընկերը»

ԼՍԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Մոդերատորներն ու կինոդիտման կազմակերպիչները կարող են

ֆիլմերը ցուցադրել տարբեր տարիքի, սեռի և մասնագիտության տեր մարդկանց, ինչպես նաև ընտրել, ասենք, երիտասարդներից, կանանցից, փախստականներից կազմված լսարաններ և այլն: Տարբեր մոտեցումները տարբեր արդյունք են տալիս, բայց դուք պետք է անպայման սահմանեք յուրաքանչյուր քննարկման նպատակը, քանի որ դա ձեզ կօգնի ընտրել ճիշտ լսարանը: Շատ կարևոր է ապահովել մարդկանց կամավոր մասնակցությունն ու նրանց մեջ հետաքրքրություն առաջացնել: Ցանկացած հարկադրանք որևէ դրական արդյունքի չի բերի, քանի որ մարդիկ չեն անկեղծանա և հակված չեն լինի ֆիլմերն ազատորեն քննարկել:

Իդեալական տարբերակում՝ լսարանը պետք է բաղկացած լինի ամենաշատը 25 հոգուց, քանի որ ավելի մեծ քանակությամբ մարդկանց հետ դժվար կլինի անկեղծ քննարկում անցկացնել: Ժամանակը երբեք բավարար չի լինի քննարկման համար, սակայն բոլորին պետք է խոսելու հնարավորություն տալ, քանի որ անհրաժեշտ է լսել բազմազան տեսակետներ: Ջանք մի՛ խնայեք լսարանի հետ ազատ ու անկեղծ հարաբերություններ ստեղծելու համար:

Ընդհանրապես, կինոդիտման ու քննարկման առավելագույն տևողությունը երեք ժամ պետք է լինի (նկատի ունենալով նաև հնարավոր ընդմիջումը): Ավելի երկարատև միջոցառման դեպքում մարդիկ կսկսեն կրկնվել, և քննարկումը կդադարի: Դուք ինքներդ պետք է ճիշտ

պահին ամփոփեք քննարկումը, որոշ թեմաներ «փակեք», իսկ որոշ հարցերի նկատմամբ հետաքրքրությունն ավելացնեք: Հիշեք, որ մարդիկ չպետք է այն զգացողությունն ունենան, որ չհասցրին իրենց ասելիքն արտահայտել:

Եթե հնարավոր է, ֆիլմերի տեսասկավառակների պատճենը թողեք համայնքային կենտրոնում, որտեղ տեղի է ունենում կինոդիտումը: Ֆոտոխցիկ վերցրեք ու լուսանկարեք կինոդիտման ընթացքն ու հաջորդող քննարկումները. դա կարող է հետագայում պետքական լինել: Որոշ դեպքերում օգտակար կլինի քննարկումները ձայնագրել՝ հետագա մտորումների համար և, միգուցե, լսարանի արձագանքների մասին գրելու նպատակով: Այս առումով, լավ կլինի, որ մոդերատորն ունենա օգնական, որը կգբառովի այդպիսի նյութերն ի մի բերելով:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆԵՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐԳԵՐ

Այս ձեռնարկում ընդգրկված 20 ֆիլմերն արժարժում են բազմապիսի թեմաներ, որոնցից են, օրինակ, ինքնության հարցը, անվտանգությունը, փախստականներն ու տեղահանված մարդիկ, պատերազմն ու բռնությունը, անձնական կորուստները, խաղաղ գոյակցությունն ու երիտասարդությունը: Որոշ ֆիլմեր կարող են մի քանի դասակարգումներում տեղավորվել: Հետագա էջերում կգտնեք մի շարք հարցեր, որոնք կօգնեն յուրաքանչյուր ֆիլմի վերաբերյալ քննարկում անցկացնել: Ստորև ներկայացված են հնարավոր ընդհանուր հարցեր:

- » Ֆիլմերի դիտումն օգնե՞ց, թե՞ խանգարեց ճանաչել հակառակ կողմի մարդկանց:
- » Արդյո՞ք հակառակ կողմը ներկայացնող հերոսները տարբերվում են ձեր երկրի լրատվամիջոցների ներկայացրած կերպարներից:
- » Ուրիշ ի՞նչ կցանկանայիք իմանալ հակառակ կողմի մարդկանց մասին:
- » Եթե ձեր կյանքի մասին ֆիլմ նկարահանվեր ու ցուցադրվեր, ինչի՞ մասին կցանկանայիք խոսել ֆիլմում:
- » Ֆիլմերում ինչ-որ բան ձեզ զարմացրե՞ց կամ բարկացրե՞ց:
- » Ֆիլմերը դիտելուց հետո հույսերո՞վ լցվեցիք, թե՞ հուսահատվեցիք:
- » Ի՞նչն էր պակասում: Ինչի՞ մասին կուզենայիք ավելի շատ իմանալ:
- » Այսպիսի նախաձեռնությունները կարո՞ղ են ինչ-որ բան փոխել:
- » Ձեր կարծիքով, ի՞նչն է խանգարում հակամարտության կարգավորմանը:
- » Ձեր կյանքն ինչպե՞ս կփոխվեր, եթե դարաբաղյան հակամարտությունը վերջապես կարգավորվեր:



ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ՝ ԸՍՏ ՖԻԼՄԵՐԻ

Ստորև կարող եք գտնել ցուցակ,
որը պարունակում է 7-10 հարց՝
ձեռնարկում ընդգրկված 20 ֆիլմերից
յուրաքանչյուրի համար:





13 ՏԱՐԻ ԱՆՑ

Չեղիակ՝

Էլջան Մամմադով

1. Ինչպե՞ս կնկարագրեիք ֆիլմի հեղինակի զգացմունքները:
2. Ի՞նչ էք կարծում, փախստականներն իրենց պատասխանատու՞ են համարում իրավիճակի համար: Եթե այո, ապա ինչո՞ւ: Ձեր կարծիքով, նրանք պատասխանատու՞ են:
3. Ինչպե՞ս է փոխվել փախստականների կյանքը տեղահանումից հետո: Որքանո՞վ են նրանք կարողանում հարմարվել նոր պայմաններին:
4. Ձեր կարծիքով որո՞նք են բաղաբային կյանքի հիմնական դժվարությունները Բաքվում ապրող փախստականների համար:
5. Ինչո՞ւ են փախստականները դժվարությամբ ազատվում իրենց հին ունեցվածքից:
6. Ո՞ր փոփոխություններն են անհանգստացնում ֆիլմի հեղինակին: Ինչո՞ւ է նա վախենում, որ իր հավանած աղջիկը կփոխվի:
7. Ի՞նչն է խանգարում փախստականներին օգտվել իրենց իրավունքներից:
8. Ձեր կարծիքով, փախստականներին ամենից շատ ի՞նչն է անհանգստացնում:
9. Որո՞նք են փախստականների ընտանեկան կյանքի խոչընդոտները: Ի վիճակի՞ են նրանք երեխաներին խաղաղ կյանքի նախապատրաստել:

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Չեղիակ՝

Մամեդշարիֆ Ալեկպերով


1. Պատերազմն ինչպե՞ս է ազդում մարդու հոգեբանության, նրա հարաբերությունների վրա:
2. Այս ֆիլմում վետերանի առողջական պրոբլեմները հաղթահարելու փորձն ինչպե՞ս է փոխել նրա կյանքը և տեսակետները:
3. Ի՞նչ դեր է խաղացել վետերանի ընտանիքը: Ի՞նչ էք մտածում նրա կնոջ որոշումների մասին՝ հաշվի առնելով այն փաստը, որ նրա ամուսինը երբեք չի կարողանալու իրեն տեսնել:
4. «Պատերազմը մարդկանց վայրենացնում է», «աննորմալ մարդիկ են պատերազմ մղում»: Գլխավոր հերոսը դրանով ի՞նչ է ուզում ասել:
5. Ի՞նչ էք մտածում այն զինվորի մասին, որն ինքն իրեն պայթեցրեց՝ հանուն ընկերների փրկության:
6. Ձեր հասարակությունում պատերազմի հաշմանդամներին ինչպե՞ս են վերաբերվում:
7. Արդյոք պատերազմում կռված մարդկանց տեսակետները չկռվածների կարծիքներից տարբերվում են: Իսկ վիրավորների ու հաշմանդամների՞:
8. Ձեր կարծիքով, վետերանն ի՞նչ նկատի ունի՝ հայրենասիրություն ասելով: Ձեզ համար ի՞նչ է հայրենասիրությունը:

ԻՆՉ ԵՆՔ ՄԵՆՔ ՈՒՉՈՒՄ

Չեղիակ՝

Գյուլնարա Մամեդզադե

1. Ռամինն իր տան մասին ի՞նչ հիշողություններ ունի:
2. Ինչո՞ւ է Ռամինը վախենում հեռանալ իր տնից, թաղամասից ու հարևանությունից:
3. Ձեր կարծիքով, Ռամինն ու իր ընկերներն ինչպե՞ս են հանրային կյանքում հաջողության հասել:
4. Որո՞նք են ձեր շրջապատի կամ հասարակության երիտասարդների հիմնախնդիրները:
5. Ձեր շրջապատի կամ համայնքի երիտասարդները կարողանո՞ւմ են արծազանքել այդ մարտահրավերների: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:
6. Ձեր բնակավայրի երիտասարդները հետաքրքրվո՞ւմ են դարաբաղյան հակամարտության հարցով:
7. Ի՞նչ էք կարծում, երիտասարդական շարժումները կարո՞ղ են ազդեցություն թողնել հակամարտության կարգավորման վրա: Ինչպե՞ս:
8. Ռամինն ինչո՞ւ է այնպես, որ երկու կողմերն էլ պատերազմում պարտվել են: Ի՞նչ նկատի ունի, երբ խոսում է կորցրած ժամանակի մասին:
9. Ձեր կարծիքով, երիտասարդ փախստականները պե՞տք է ինտեգրվեն այն հասարակությանը, որտեղ ապրում են: Ինչպիսի՞ պարտավորություններ պետք է ունենան, եթե ինտեգրվեն:



ԲԶԵՉԱԿԵՐՆԵՐԸ

Չեղինակ՝ Մադինա Նիկ-Նաչաթ

1. Ինչպե՞ս կնկարագրեիք երկու գյուղերի հարաբերությունները:
2. Ինչո՞ւ է այդ իրավիճակը տևում ավելի քան 300 տարի:
3. Վիճաբանության մեջ ո՞րն է գյուղի տարեցների դերը:
4. Ինչպե՞ս կարելի է լուծել երկու գյուղերի տոհմական թշնամության հարցը:
5. Ճշմարտանմամբ է այն միտքը, որ երկու գյուղերը միավորվել են, որ դիմագրավեն ընդհանուր թշնամուն:
6. Ֆիլմն ի՞նչ է պատմում ինքնության ձևավորման մասին:
7. Որքանո՞վ են տարբերվում երկու գյուղերում ապրող մարդիկ: Կողմնակի անձն այդ տարբերությունները կնկատի՞:
8. Հնարավոր՞ է այս երկու գյուղերի հակամարտությունը համեմատել հայ-ադրբեջանական հակամարտության հետ: Որո՞նք են նմանությունները: Իսկ տարբերությունները:
9. Ի՞նչ եք կարծում, կոնֆլիկտի թեմայով գրուցելիս պե՞տք է արդյոք ամենացավոտ խնդիրները մի կողմ թողնել ու խոսել երկրորդական հարցերից: Թե՞ հենց սկզբից պետք է հիմնական հարցերը քննարկել:

ԸԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՓԱԽՍՏԱԿԱՆ

Չեղինակ՝ Արմինե Մարտիրոսյան

1. Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք ադրբեջանցի փախստականներն էլ ունեն ֆիլմում ներկայացված պրոբլեմները: Ի՞նչ ընդհանրություններ և տարբերություններ կան՝ իրավիճակի ու տեսակետների առումով:
2. Պատերազմի ընթացքում ձեր ընտանիքը կորուստներ ունեցե՞լ է: Իսկ ձեր բարեկամներն ու ընկերները: Եթե այո, այդ ընտանիքներն ի՞նչ են զգում հայերի/ադրբեջանցիների նկատմամբ:
3. Ֆիլմի հերոսներից մեկն ասում է. «Նախկինում հրաշալի ընկերներ ունեի հակառակ կողմում: Ազգության մասին չէիք էլ մտածում»: Հայ/ադրբեջանցի ընկերներ ունեցե՞լ եք: Այդ ժամանակ հարաբերություններում իսկապե՞ս պրոբլեմներ չկային:
4. Գիտե՞ք այնպիսի դեպքեր, երբ հարևանները հակամարտության ժամանակ միմյանց օգնել են՝ անկախ ազգությունից:
5. «Նախնիներիս գերեզմանն այն կողմում մնաց»: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է զգում այն մարդը, ով իր ընտանեկան գերեզմանը «մյուս կողմում» է թողել: Ի՞նչ զգացողություններ ունեք այն գերեզմանատեղերի նկատմամբ, որոնց տեղերն այլևս ձեր հասարակությունում չեն ապրում:
6. «Անձամբ ես՝ ներել չեմ կարող», - ասում է ֆիլմի հերոսուհիներից մեկը: Ձեր կարծիքով, ի՞նչ է անհրաժեշտ, որպեսզի երկու կողմերը, ինչպես նաև անհատ մարդիկ միմյանց ներեն: Մյուս գլխավոր հերոսն ասում է, որ երբեք վրեժխնդրության զգացում չի ունեցել: Արդյո՞ք երկու դիրքորոշումներն էլ անկեղծ են ու ճշմարտանման:
7. Այս ֆիլմի հերոսներից մեկն իր տան նկուղային հարկում բուժական միջոցներով ու մթերքի պաշարով լցված փոքրիկ բունկեր է կառուցում: Արդարացվա՞ծ են նրա գործողությունները:
8. Ի՞նչ եք մտածում փախստականների ու տեղահանվածների մասին: Նրանք «մեզ» նմա՞ն են, ինտեգրվե՞լ են հասարակության մեջ: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:
9. Ի՞նչ եք կարծում, հակամարտության քաղաքական կարգավորումից հետո փախստականներն ու տեղահանվածները կուզենա՞ն վերադառնալ: Դուք կուզենայի՞ք վերադառնալ: Ի՞նչ խնդիրների առջև կկանգնեիք:



ԱՍՈՒՐ ԸՆԿՈՒՅՉ

Յեղիսակ՝ Կարինե Սաֆարյան

1. Ի՞նչ եք մտածում պատերազմի ընթացքում գերիների ու պատանդների փոխանակման ու «ամուտրի» մասին: Լսե՛լ եք այդ երևույթի մասին, գիտե՞ք ինչ-որ դեպքեր:
2. Ի՞նչ գիտեք ռազմագերիների ու պատանդների իրավունքների մասին:
3. Գիտե՞ք այնպիսի դեպքեր, երբ ձեր համայնքում հակառակ կողմի գերիներին մարդկայնորեն են վերաբերվել: Իսկ եղե՛լ են դաժանաբար վարվելու դեպքեր:
4. Ֆիլմում հալիդան ասում է, որ ադրբեջանցիների նկատմամբ ատելություն չի զգում: Եթե նրա իրավիճակում լինեիք, կներեի՞ք:
5. Խալիդան ասում է, որ եթե կարողանար ևս մի կյանք ապրել, նույն ձևի կապրեր, քանի որ ինքն իրեն երջանիկ է համարում: Ձեր կարծիքով, ինչպե՞ս է այս մոտեցումը բնութագրում հերոսուհուն: Ի՞նչ վերաբերմունք ունի նա կյանքի նկատմամբ:
6. Ձեր կարծիքով, կանայք ի՞նչն են կարևոր համարում երջանկության համար:
7. «Տղամարդիկ կռվում են, սակայն կանայք են կրում պատերազմի հարվածները»,- ասվում է ֆիլմում: Համաձայն եք: Ձեր կարծիքով, դա զուտ հայկակա՞ն մտածելակերպն է արտահայտում, թե՞ ադրբեջանցի, արբանացի, խորվաթ կանայք էլ կհամաձայնվեին:

ԿՅԱԼՔԻՑ ԲՇՎԱԾՆԵՐԸ

Յեղիսակ՝ Գայանե Բալայան

1. Ճանաչո՞ւմ եք մարդկանց, ովքեր կապ են պահպանում «մյուս կողմում» մնացած ընկերների կամ հարևանների հետ: Եթե այո, պատմե՛ք նրանց պատմությունը:
2. Ձեր համայնքում պաշտպանվա՞ծ են արդյոք փախստականների ու տեղահանվածների իրավունքները: Եթե ոչ, ի՞նչ կարելի է անել, որ նրանք իրենց ավելի պաշտպանված զգան:
3. Ձեր կարծիքով, ո՞վ է պարտավոր զբաղվել փախստականների պրոբլեմներով:
4. Ֆիլմի հերոսներից մեկն ասում է, որ երբեք չի հեռանա՝ անկախ դժվարություններից. «Սա մեր հայրենիքն է, և ես չեմ գնալու, սա իմ հողն է»: Ձեզ համար ի՞նչ է հայրենիքը: Այն որտե՞ղ է սկսվում և ավարտվում:
5. Լիդայի նախկին հարևան ադրբեջանցին գրում է, որ թռչակը ցածր է, «ընդամենը 12 շիրվան»: Ի՞նչ եք կարծում, հակամարտության կողմերում գտնվող թռչակառուների պրոբլեմները նմա՞ն են:
6. Ձեր կարծիքով, փախստականները հակամարտության խաղաղ լուծման միջոց են, թե՞ նրանց գոյությունն ավելի է ուժեղացնում հակամարտությունը:
7. Ֆիլմի հերոսներից մեկը երազում է իր փայտե խաղալիք ինքնաթիռով թռչել «Ամերիկա, որտեղ կյանքը լավ է»:

Կցանկանայի՞ք խաղաղ, ապահով ու բարգավաճ կյանքով ապրել, սակայն՝ հայրենիքից հեռու:

8. Կինոդիտումներից մեկի ժամանակ մարդիկ ֆիլմի հեղինակներին մեղադրեցին, որ հանրությանը «կեղտոտ սպիտակեղեն են ի ցույց դնում»: Համաձայն եք: Արդարացվա՞ծ է արդյոք հասարակության պրոբլեմների մասին բացեիբաց խոսելը, երբ գիտես, որ ասածդ, հակառակ կողմն էլ է լսելու:



ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԹԱԿՈՒՄ Ե ԴՈՒՈՐ

Յեղիսակ՝ Ալվարո Գրիգորյան

1. Ձեր կարծիքով, ո՞վ է պատերազմի համար պատասխանատվություն կրում: Ո՞վ է պատասխանատու դարաբաղյան պատերազմի համար: Սովորական մարդիկ ի՞նչ կարող են անել պատերազմից խուսափելու համար:
2. Անկողնուն գամված Մխիթարն ասում է. «Ես եմ ընտրել այս ճանապարհը, դա իմ ճակատագիրն էր»: Ի՞նչ էք մտածում նրա ասածի մասին:
3. Մխիթարի համար անչափ դժվար էր հաշտվել հաշմանդամության հետ, սակայն, վերջիվերջո, ստեղծագործելն ու արվեստը նրան թեթևացում բերեցին: Ստեղծագործելն ի՞նչ դեր ունի ձեր կյանքում:
4. Ի՞նչ էք զգում Մխիթարի նկատմամբ: Խղճահարությամբ էք լցվում, կարեկցանքով, թե՞ այլ զգացողությամբ:
5. Մխիթարին ընկերուհին խոստովանում է, որ չնայած ամուսին ունի, բայց իր պրոբլեմները Մխիթարի հետ է կիսում: Կարո՞ղ էք ընկերանալ նման ճակատագիր ունեցող մարդու հետ ու նրանից խորհուրդներ ընդունել:
6. Ի՞նչ էք կարծում, հաշմանդամները ձեր հասարակությունում իրենց ինչպե՞ս են զգում: Նրանք ինտեգրված են:
7. Մխիթարն ասում է, որ Աստծուն չի հավատում և Աստվածաշունչը միայն որպես գրականություն է կարդում: Ձեր կարծիքով, նա իսկապե՞ս հավատք չունի: Իսկ դուք հավատացյա՞լ էք, դժվարին պահին ապավինո՞ւմ եք Աստծո օգնությանը:
8. Մխիթարն ասում է, որ վիրավորվելուց առաջ դաժան մարդ է եղել, իսկ հետո բարիացել է: Ձեզ հետ եղե՞լ է այնպիսի դեպք, որ դժվարին պահերից հետո բարիանաք կամ դաժանանաք: Հասարակությունը հակամարտությունից հետո բարիանո՞ւմ է, թե՞ չարանում: Ի՞նչն է ազդում հասարակության բարության կամ զայրույթի վրա: Կարո՞ղ էք բերել օրինակներ:
9. «Կյանքն անարդար սկսվում է, անարդար էլ շարունակվում», - ասում է Մխիթարը: Համաձայն էք: Հնարավո՞ր է արդյոք կյանքը փոխել, ավելի արդարացի դարձնել:
10. Ազգամիջյան հակամարտությունների արդյունքում հնարավո՞ր է արդարության հասնել: Ձեր ազգի ճակատագիրն արդարացի՞ էք համարում: Իսկ մյուս կողմի՞նք:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԵՔԻԱԹ

Յեղիսակ՝ Սուսաննա Սայիյան

1. Ի՞նչ էք կարծում, հնարավո՞ր է հումորով խոսել այնպիսի նուրբ հարցի մասին, ինչպիսին է դարաբաղյան հակամարտությունը:
2. Ինչպե՞ս են մի կողմի մարդիկ ընդունում հակառակ կողմից արտահայտված հեզանաքն ու հումորը: Կոնֆլիկտային իրավիճակում հումորը կարո՞ղ է երկու կողմից էլ նույն կերպ ընկալվել: Ի՞նչ էք զգում, երբ ծաղրում են հակառակ կողմի մարդկանց: Կարո՞ղ էք ծիծաղել ինքներդ ձեզ վրա:
3. Ձեր կարծիքով, Վանք գյուղը տիպական է Ղարաբաղի համար, թե՞ բացառիկ:
4. Միջազգային կինոդիտումներից մեկի ժամանակ այս ֆիլմը շատ հակասություններ առաջացրեց: Որո՞նք են ֆիլմի հիմքում ընկած այն հարցերը, որոնք այդ հակասությունն են առաջացրել:
5. Հակամարտության համատեքստում օգտակա՞ր է արդյոք քննարկել այնպիսի թեմաներ, ինչպիսիք են պատմական ինքնությունն ու մշակութային արմատները: Այդպիսի բանավեճերը կարո՞ղ են որոշակի պատասխաններ տրամադրել:
6. Այս ֆիլմում կա՞ ինչ-որ բան, որը հայերի ու արդրեշանցիների համար ընդհանուր է:



ՍՊԵԿՏՐ

Չեղինակներ՝ Վաֆա Ֆարաջովա, Արինա Խաչիկյան

1. Ի՞նչ եք կարծում, ֆիլմն ինչի՞ մասին է:
2. Ի՞նչ եք հասկանում «երկխոսության անհրաժեշտություն» ասելով:
3. Նկարիչները խոսում են հնարավոր զիջումների մասին, սակայն չեն հստակեցնում, թե ինչ նկատի ունեն: Փոխզիջումն ի՞նչ է ձեզ համար:
4. Նկարիչներից մեկն ասում է. «Մենք թաքցնում ենք մեր ներքին թշնամանքը»: Համաձայն եք: Ղարաբաղյան հակամարտությունից առաջ հայերի ու ադրբեջանցիների միջև ատելություն կա՞ր: Այսօր կա՞ ատելություն:
4. Ադրբեջանցի նկարիչն ասում է, որ հաջորդ սերունդն ավելի հակված կլինի խաղաղ ապրելակերպի: Համաձայն եք: Արդյո՞ք դա նշանակում է, որ հայերի ու ադրբեջանցիների թշնամությունը մի քանի սերունդ անց կվերանա: Ձեր կարծիքով, սա ընդունելի՞ մոտեցում է:
5. Համաձայն եք, որ մենք պարզապես խաղալիք ենք մեծ տերությունների ձեռքին:
6. Ձեզ համար ո՞րն է պատերազմի գույնը: Հակամարտության հետ կապված ի՞նչ զուգորդումներ կան: Իսկ խաղաղության հետ կապվա՞ծ: Որո՞նք են խաղաղության գույներն ու երանգները: Խաղաղությունը

- ենթադրո՞ւմ է արդյոք, որ բոլոր հիմնահիմնադրուները պետք է միանգամից լուծվեն:
7. Հայ նկարչի ընտրած թեման սահմանների բացակայությունն է, սահմանափակումների մերժումը: Նա նախանձում է թռչունների, որոնք կարող են ցանկացած ժամանակ թռչել: Սահմանները ձեզ համար ի՞նչ են նշանակում: Նրանք պետք է լինեն հաստատուն և դժվարանցանելի՞, թե՞ թեթև և դյուրանցանելի:
8. Ադրբեջանցի նկարիչը խոսում է առաջին քայլն անելու մասին: Ի՞նչ եք կարծում, հայ-ադրբեջանական հարաբերությունները վերականգնելու առաջին քայլն արդեն արվե՞լ է: Եթե այո, ապա ո՞րն էր այդ քայլը և ինչպե՞ս կարող է այն շարունակվել: Եթե ոչ, ո՞րը կարող էր լինել այդ քայլը:
9. Ձեզ դուր եկա՞ն նկարիչները: Նրանք նմա՞ն են իրար և միմյանց հետ լեզու կգտնե՞ին, եթե հանդիպե՞ին: Կուզենայի՞ք հանդիպել հակառակ կողմի մարդկանց հետ: Ի՞նչ կցանկանայիք նրանց ասել:

ՔԱՄԱՆՉԱ-ՆԱՄԵ

Չեղինակներ՝ Վուգար Սաֆարով, Կարինե Սաֆարյան

1. Ֆիլմի ավարտն ի՞նչ ազդեցություն ունեցավ ձեզ վրա:
2. Արդյոք կարևոր է քննարկել երաժշտության կամ խոհանոցի մշակութային ծագումն ու պատկանելությունը: Գուցե այդպիսի քննարկումներն իրականում ինչ-որ ուրիշ բանի մասին են: Որտեղից են ծնվում այդ քննարկումները:
3. Ձեր ազգի և հարևան այլ ժողովուրդների միջև նմանատիպ վեճեր լինո՞ւմ են: Որտե՞ր և ինչո՞ւ է առաջացել ամենասուր վիճաբանությունը: Ինչպե՞ս է այն հաղթահարվել:
4. «Ինչ լավ ես նվագում, ափսոս, որ հայ ես»: Որևէ մեկը ձեզ նման բան ասե՞լ է: Ի՞նչ զգացողություն եք ունեցել:
5. Ձեր կարծիքով, ֆիլմի երաժիշտները հանդուրժող են: Նրանց մոտեցումների մեջ ինչ-որ ընդհանուր բան կա՞:
6. Որտեղից է գալիս այլ մարդկանց ու մշակույթների նկատմամբ անհանդուրժողականությունը:
7. Արդյոք կա՞ն ինչ-որ կատեգորիայի մարդիկ, որոնց դժվարությամբ եք հանդուրժում: Եթե այո, ապա ինչո՞ւ:
8. Ի՞նչ եք կարծում, միմյանց մասին ավելի շատ իմանալը կարո՞ղ է հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման վրա դրականորեն ազդել:



«ԷԳՈ» ՈՃՈՎ

Յեղիսակներ՝ Նազրին Շաքիրզադե, Լուսինե Մուսայեյան

1. Ձեր կարծիքով, այս ֆիլմն ու իր թեման ինչպե՞ս են առնչվում դարաբաղյան հակամարտությանը:
2. Եթե ֆիլմի հերոսների անունները կամ բնակավայրերը չիմանայիք, կկարողանա՞յի՞ք գուշակել, թե նրանք որտեղից են: Եթե այո, ապա ինչպե՞ս:
3. Ի՞նչ էք կարծում, արվեստներով, դիզայնով կամ երաժշտությամբ զբաղվող երիտասարդները կարո՞ղ են հակամարտության ելքի վրա ազդել:
4. Համարո՞ւմ եք, որ արվեստն անձնական ազատություն է տալիս: Անձնական ազատության հասնելը կարո՞ղ է մարդկանց օգնել, որ միմյանց հասկանան:
5. Կարո՞ղ եք մտածել, թե հայ և ադրբեջանցի երգիչների, երաժիշտների ու Նորաձևության բնագավառում աշխատողների համագործակցությունն ինչպե՞ս կարող է բարելավել հայ-ադրբեջանական հարաբերությունները:
6. Ձեր կարծիքով, ֆիլմի երիտասարդ հերոսներն ի՞նչ են մտածում դարաբաղյան հակամարտության մասին և ի՞նչ են զգում հակառակ կողմի մարդկանց նկատմամբ:
7. Ձեզ դուր եկա՞՞վ ֆիլմի երիտասարդ հերոսների ոճը: Ի՞նչը հավանեցի՞ք, իսկ ի՞նչը ոչ:

ՍԱԼԱՄ ԱԼԵՅԲՈՒՄ, ԿՈՎԿԱՍ

Յեղիսակ՝ Իրադա Բուլանա

1. Թուրք մեսիտեթների մասին ի՞նչ գիտեք: Ֆիլմից Նոր տեղեկություններ ստացա՞ք այդ համայնքի մասին:
2. Ի՞նչ էք կարծում, այս ֆիլմն ինչ հարցեր է բնարկում մեսիտեթների պատմությունից բացի:
3. Այլ փախստականների պատմությունն իմանալն օգնո՞ւմ է լուծել, ընդհանրապես, փախստականների հիմնահարցերը:
4. Ի՞նչ էք մտածում, տեղահանվածները կարո՞ղ են վերադառնալ իրենց Նախկին տները:
5. Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն կարող է լինել թուրք մեսիտեթների ինդրի արդարացի լուծումը:
6. Համարո՞ւմ եք արդյոք, որ ադրբեջանցիները պետք է վերադառնան Լեռնային Ղարաբաղ, Քուբաթլի, Ֆիզուլի: Ի՞նչ կասեք հայերի՝ Բաբու, Գյանջա, Շահումյան վերադառնալու մասին:
7. Կարո՞ղ է տեղահանվածների ինդրիների լուծումն օգնել, ընդհանրապես, դարաբաղյան հակամարտության լուծմանը:
8. Հնարավո՞ր է հայ-թուրքական հարաբերություններից ու դրանք հարթելու փորձերից ինչ-որ դասեր քաղել հայ-ադրբեջանական հարաբերությունների լուծման համար:

ՇՈՒՇԻՆ ՎՐԱՆԻ ՏԱԿ

Յեղիսակ՝ Զինարա Հուսեյնյովա

1. Ի՞նչ էք զգում ֆիլմի հերոսի նկատմամբ:
2. Վրանի տակ գտնվող թեյարանն ի՞նչ է խորհրդանշում:
3. Ի՞նչ էիք զգում, երբ հերոսը հայերեն էր խոսում: Նրա պատմած պատմություններն ինչպիսի՞ զգացմունքներ են առաջացնում:
4. Կարծում եք, այդ մարդը կվերադառնա՞ Շուշի, եթե հնարավորություն լինի:
5. Սովորական մարդիկ ինչպե՞ս կարող են ազդել խաղաղարար գործընթացի վրա:
6. Ի՞նչ էք մտածում փախստականների վերադարձի մասին: Այս հարցի լուծման ո՞ր տարբերակը կնախընտրեի՞ք:
7. Տեղահանվածների վերադարձը կօգնի՞ հակամարտության լուծմանը: Դա առաջնահե՞րթ ինդրի է: Ի՞նչ կասեք մյուս կողմի մասին:
8. Ձեր կարծիքով, փախստականներն իրենք որքանո՞վ են պատրաստ վերադառնալ:
9. Ինչպե՞ս կարելի է ապահովել տուն վերադարձող տեղահանվածների անվտանգությունը: Հայերն ու ադրբեջանցիները պատրա՞ստ են կրկին միասին ապրել: Ի՞նչ պետք է տեղի ունենա, որպեսզի դա հնարավոր դառնա:



ԴԱՌՒՆԼՈՂ

Յեղիակակ՝ Վուզար Սաֆարով

1. Ի՞նչ եք կարծում, երիտասարդներն ի՞նչ պետք է իմանան պատերազմի մասին:
2. Ձեր կարծիքով, «վիրտուալ բռնությունը» մասնակցելը դրդո՞ւմ է գործակցել իրական աշխարհում տեղի ունեցող բռնություններին:
3. Բռնությունն ինչպե՞ս կարող է կիրառվել: Ե՞րբ է այն արդարացված:
4. Ի՞նչ եք կարծում, ֆիլմի հերոսն այդքան կոգնորվե՞ր ռազմական խաղերով, էթե նրա մրցակիցները հայեր չլինեին:
5. Ձեր կարծիքով, աղջիկները կարո՞ղ են նույնքան ոգևորվել համակարգչային խաղերով, որքան՝ տղաները: Բացատրեք:
6. Ի՞նչ եք կարծում, կարելի՞ է ասել, որ այդ երիտասարդն ինչ-որ բանից փախչում է: Իսկ ինչի՞ց:
7. Ձեր կարծիքով, իրական պատերազմի վետերանն ի՞նչ կասեր այդ երիտասարդին:
8. Հավատո՞ւմ եք, որ երիտասարդը ռազմախաղերի միջոցով եկել է այն եզրակացության, որ «ղարաբաղյան պատերազմում ոչ ոք չի շահել... պատերազմը միայն կորուստներ է բերում»: Ի՞նչ եք կարծում, այս տեսակետը տարբերվո՞ւմ է դարաբաղյան պատերազմի մասին դասագրքային գիտելիքներից:

ԻՄ ԹՇՆԱՄԻՆ՝ ԻՄ ԸՆԿԵՐԸ

Յեղիակակներ՝ Ալվարո Գրիգորյան, Վաֆա Ֆարաշովա

1. Այս ֆիլմում պահպանվա՞ծ է հավասարակշռությունը: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:
2. Ավագն ու Ալբերտն ի՞նչ ընդհանրություններ ունեն:
3. Ի՞նչ եք զգում, երբ լսում եք, որ ձեր կողմի գինվորները ռազմագերիների հետ կոպիտ են վարվել:
4. Այս ֆիլմում խոսվո՞ւմ է ռազմագերիների հետ վարվելու դրական տեսակետների մասին: Որո՞նք են այդ տեսակետները:
5. Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս կարծազանքեին ֆիլմի գլխավոր հերոսները, էթե կրկին հանդիպեին այն մարդկանց, ովքեր իրենց նախկինում գերի են վերցրել: Ի՞նչ կասեր Բենիկը, էթե Նորից տեսներ այն ընտանիքին, որն իրեն բռնի ուժով պահում էր: Ի՞նչ կասեր Ազիլն իրեն բանտարկած մարդկանց: Հնարավո՞ր է, որ Բենիկն ու Ազիլը ներեն այդ մարդկանց:
6. Ֆիլմում կա՞ր այնպիսի պատմություն, որ ձեզ վրա ավելի շատ ազդեց, քան մնացածները: Եթե այո, ապա ո՞ր պատմությունն է դա, և ինչո՞ւ:
7. Համաձայն եք Ալբերտի հետ, երբ նա ֆիլմի վերջում ասում է, որ այս պատերազմը ոչ մեկին պետք չէր: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:
8. Մարդիկ կարո՞ղ են այսպիսի դժվարին փորձություններից հետո կրկին միասին ապրել:

Ց-ՐԴ ԿԻԼՈՍԵՏՐԻՆ

Յեղիակակներ՝ Արմինե Մարտիրոսյան, Նաիրյա Բաբաևա

1. Համաձայն եք, որ խառն ամուսնությունը ժամանակակից աշխարհում առանձնապես մեծ խնդիր չէ:
2. Ի՞նչ եք կարծում, ճիշտ վարվեց Ֆլորայի ընտանիքը, երբ դեմ կանգնեց աղորբեջանցու հետ նրա ամուսնությանը:
3. Հնարավո՞ր է արդյոք, որ միևնույն ընտանիքի անդամները, թեպետ գտնվելով հակամարտության հակառակ կողմերում, Facebook-ի դարաշրջանում չկարողանան միմյանց հետ շփվել: Երբևէ ինտերնետի միջոցով շփվե՞լ եք «մյուս կողմի» մարդկանց հետ: Այդ փորձը ձեզ ի՞նչ է տվել:
4. Ի՞նչ եք կարծում, Անահիդայի ընկերները գիտե՞ն, որ ինքը հայ է: Եթե այո, ո՞րն է արձագանքը:
5. Ձեր կարծիքով, Ադրբեջանում որպես հայ բացե՞րբաց չապրելը նրա անձնական ընտրությունն է: Ի՞նչ տեղի կունենար, էթե բացահայտվեր, որ նա հայ է:
6. Անահիդան ինչո՞ւ է Ադրբեջանում մտնում: Ինչո՞ւ չի տեղափոխվում Ռուսաստան կամ Հայաստան:
7. Ի՞նչ եք կարծում, հայերն ու աղորբեջանցիները կարո՞ղ են կրկին միասին ապրել: Եթե ոչ, ապա հավատո՞ւմ եք, որ հայերի ու աղորբեջանցիների միջև երբևիցե կարող է խաղաղություն լինել:



ՉԱՐՄՈՒՅԻՆ ԿՈՎԿԱՍԻՑ

Յեղիսակ՝ Արմինե Մարտիրոսյան

1. Չինան, մեքենայով Ուկրաինա գնալու ճանապարհին, իր մորաքրոջ տղա Ռուսլանի հետ դարաբաղյան պատերազմի մասին է խոսում՝ ասելով, որ «դա ամբողջովին քաղաքականություն է և մեզ հետ կապ չունի»: Ձեր կարծիքով, նա ի՞նչ նկատի ունի և ինչո՞ւ է դա ասում:
2. Ի՞նչ զգացիք, երբ տեսաք դարաբաղյան զինվորական համազգեստով ադրբեջանցի կնոջը:
3. Ինչո՞ւ Չինան որոշեց պատերազմի ժամանակ մնալ Լեռնային Ղարաբաղում: Ի՞նչ եք կարծում, դա հնարավոր կլինե՞ր, եթե նա հայի հետ ամուսնացած չլիներ:
4. Ֆիլմի ընթացքում Չինան ասում է. «Կարևոր չէր, թե ես ով էի» և «Ղարաբաղում քեզ վերաբերվում են պարզապես որպես տեղացու»: Ի՞նչ եք կարծում, Ղարաբաղում հայերի ու ադրբեջանցիների հարաբերությունները տարբերվո՞ւմ են այլ վայրում ունեցած նրանց հարաբերություններից: Ինչո՞ւ:
5. Ի՞նչ եք կարծում, գոյություն ունի՞ր առանձին դարաբաղյան «ինքնություն», որը կարող է հայերի և ադրբեջանցիների համար ընդհանուր լինել: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:
6. Ձեր կարծիքով, Ղարաբաղը հայերի և ադրբեջանցիների ընդհանուր հայրենիքն է: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում լինել դարաբաղցի: Երբևիցե խաղաղություն կլինի՞ր, եթե Ղարաբաղն ինչ-որ ձևով, հայերի ու ադրբեջանցիների համար ընդհանուր ջրառնա:
7. Ի՞նչ եք կարծում, Չինայի քեռին ի՞նչ նկատի ունի՞ր Ղարաբաղի «ոսկե դարաշրջան» ասելով: Ձեզ համար ինչպիսի՞ն կարող էր լինել Ղարաբաղի ոսկե դարաշրջանը:
8. Ֆիլմում Չինայի քեռին հիշատակվում է որպես ադրբեջանցի, մահմեդական, կոմունիստ և կովկասցի: Իսկ դուք ունե՞ք տարբեր «ինքնություններ»: Եթե այո, ապա ինչպե՞ս են դրանք համատեղվում:

ԿԱՏԱՐՍԻՍ

Յեղիսակ՝ Դավիթ Սիմոնյան

1. Ֆիլմն ինչի՞ր մասին է:
2. Ձեր կարծիքով, ո՞րն է Դավիթի նետերի ծայրակալների հավաքածուի իմաստը: Այն ի՞նչ է պատմում Ղարաբաղի պատմության մասին:
3. Ձեզ համար զարմանալի՞ է, որ Դավիթը ականապատողների նկատմամբ զայրույթ չի արտահայտում:
4. Դավիթն ասում է, որ մարդիկ սիրում են միմյանց սպանել, բացի այդ, պատերազմը փող աշխատելու լավ միջոց է: Չամաձա՞յն եք նրա հետ:
5. Ի՞նչ եք կարծում, Ղարաբաղում երբևիցե խաղաղություն կլինի՞ր:
6. Պետք է սահմաններն ականապատել և փակել՞, թե՞ ականազերծել և բացել:
7. Ֆիլմի ավարտն ինչպիսի՞ր զգացմունքներ է առաջացնում. հոռետեսակա՞ն, թե՞ լավատեսական:



ԲՈԼՈՐ ՖԻԼՄԵՐՆ ԷԼ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ ԵՆ

Յեղիսակ՝ Լուսինե Մուսայելյան

1. Ինչո՞ւ խառն ամուսնությունից ստեղծված ընտանիքը չբաժանվեց, իսկ շատ այլ ընտանիքներ քայքայվեցին:
2. Երբ Էլմիրայի մայրն իմացավ իր աղջկա ու Սլավիկի հարաբերությունների մասին, նա ասաց. «Դուք տարբեր ազգերից եք... Մտքովդ Էլ չանցնի»: Չամաձա՞յն եք նրա հետ: Ճի՞շտ էր վարվում, որ անհանգստանում էր հայի հետ ամուսնացող աղջկա համար:
3. Ի՞նչ զգացողություն ունեցաք, երբ իմացաք, թե ինչ է պատահել Էլմիրայի ու Սլավիկի երկու երեխաների հետ:
4. Կարելի՞ է ասել, որ պատերազմի մասին Էլմիրայի բացասական խոհերը յուրահատուկ են, որովհետև նա ադրբեջանցի է, իսկ ամուսինը՝ հայ: Թե՞ բոլորն Էլ կարող են այդպիսի զգացմունքներ ունենալ: Չամաձա՞յն եք նրա հետ:
5. Ղարաբաղյան հակամարտությունից ի վեր, երբեմն ասվում է, որ հայերն ու ադրբեջանցիներն «անհամատեղելի են»: Էլմիրայի ու Սլավիկի օրինակն ի՞նչ է ասում այդ մասին:
6. Ի՞նչ եք կարծում, անձնական կորուստները անհատներին մտերմացնո՞ւմ են, թե՞ հեռացնում: Իսկ ազգերի կամ ժողովուրդների դեպքո՞ւմ: Ո՞րն է տարբերությունը:
7. Չամաձա՞յն եք Էլմիրայի այն խոսքի հետ, որ «ընտանիքը փոխզիջումների վրա է կառուցվում»: Ձեր կարծիքով, փոխզիջումը ե՞րբ է արդարացված: Իսկ ե՞րբ արդարացված չէ:
8. Ի՞նչ եք կարծում, Էլմիրան ու Սլավիկն ինչպե՞ս կարծազանքեին, եթե իրենց երեխաներից մեկը ցանկանար ամուսնանալ այլազգի անձնավորության հետ:
9. Ձեր կարծիքով, հասարակությունը պետք է միատա՞րր լինի: Օգտակա՞ր է արդյոք տարբեր ազգերի ու մշակույթների համագոյակցությունը:

ԽՈՐԵՐ «ԿԻՆՈՒՆԿՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանում, Ադրբեջանում
և Լեռնային Ղարաբաղում
կազմակերպված ավելի քան 90
կինոդիտումների ժամանակ
մարդիկ ինչպե՞ս են արձագանքել
«Կինոերկխոսություններին»:
2010-11թթ. կինոդիտումներից
հետո անցկացված քննարկումների
մոդերատորները ներկայացնում են
իրենց խոհերը:





ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ, ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ԵՎ ՊՐՈԴՅՈՒՍԵՐ /ՐԱՅԱՍՏԱՆ/

Սիրելի ֆիլմը. «Ամուր ընկույզ»:
«Ինձ դուր է գալիս հերոսուհին: Նա ուժեղ կին է»:

Մենք, սովորաբար, չենք սիրում կասկածի տակ առնել մանկությունից անվիճելի ճշմարտություն համարվող համոզմունքները: «Պատմական հող», «արդար կռիվ», «հող ու արյուն», «պատմական արդարություն» և նմանատիպ դասակարգումները կյանքը հեշտացնում են, բանի որ թույլ չեն տալիս, որ տեսնենք մոխրագույնի երանգները: «Կինոերկխոսություններից» հետո անցկացվող քննարկումները հաճախ սկսվում էին հենց այդպիսի խոսքերով: Մարդիկ հանդես էին գալիս «հայրենասիրական» գաղափարներով, ներկայացնում «թշնամիների» ու «բարեկամների» սև ու սպիտակ գնահատականներ, շարադրում մեր հերոսական անցյալի հերոսական դրվագները: Սակայն հենց խոսելու ընթացքում մարդիկ սկսում էին վերանայել իրենց «բացարձակ ճշմարտությունները»:

Երևանյան կինոդիտումներից մեկից հետո երիտասարդ մասնակիցներից մեկի մայրը եկավ «Ինտերնյուսի» գրասենյակ ու պատմեց, որ իր աղջիկն արդեն երեք օր է, ինչ մտմտում է մի պարզ հարցի շուրջ. ի՞նչ է հայրենասիրությունը: Ֆիլմերը հարցեր էին առաջացրել այն թեմաների շուրջ, որոնք նա միշտ որպես անառարկելի ճշմարտություն էր ընդունել: Գորիսի կինոդիտման ժամանակ լսարանում կար մի երիտասարդ ուսանող, ով իսկապես ազդվել էր ֆիլմերից: «Հիմա ես չգիտեմ, թե ինչ մտածեմ», - ասաց նա: «Բայց գիտեմ, որ ուզում եմ տուն գնալ, ֆիլմերի մասին մտածել ու մերոնց հետ խոսել այդ թեմաներով: Կարծում էի, որ հակամարտության մասին բոլոր հարցերի պատասխանները գիտեմ, սակայն հիմա համոզված չեմ»:

Ես չգիտեմ, թե այդ ուսանողն ու երևանցի աղջիկն ինչ եզրակացության կգան, սակայն ամենակարևորն այն է, որ նրանք փորձում են գտնել ճշմարտությունը: Երկունս էլ փորձում են քարոզչությունից վեր կանգնել և իրենց համար ինչ-որ բան պարզել:

Մոդերատորի աշխատանքը հետաքրքիր է: Կարող է թվալ, որ սահմանափակումները շատ են, չեք կարող լսարանի հետ վիճել կամ նրանց ասել, թե ինչն է ճիշտ, ինչն է սխալ: Բայց դուք կատալիզատորն եք, և դուք պետք է լսարանին մարտահրավեր նետող հարցեր տաք ու քննարկումն առաջ տանեք: Եթե կարողանաք դա անել, մարդիկ այլևս պաշտոնական դիրքորոշումների մասին չեն մտածի ու կսկսեն հասկանալ, որ լիովին հնարավոր է բարեկամական քննարկում անցկացնել հակառակ կողմի մարդկանց հետ, և ամենևին պարտադիր չէ, որ ինչ-որ մեկը նրանց ստիպի այս կամ այն կերպ մտածել: Ես միշտ մարդկանց ասում եմ. «Ճիշտ պատասխաններ մի՛ փնտրեք, դրանք գոյություն չունեն: Մի՛ ասեք այն, ինչ ուրիշներից եք լսել: Ասեք, թե դուք ինչ եք մտածում»:

Զգիտեմ, արդյո՞ք մարդկանց մտածելակերպը փոխել ենք այս ֆիլմերով, սակայն հաստատ գիտեմ, որ մեր բոլոր կինոդիտումներով ու քննարկումներով գոնե ցույց ենք տվել, որ իրերին կարելի է տարբեր կողմերից նայել ու տարբեր կերպ հասկանալ մեզ վրա ազդող հիմնական երևույթները, այդ թվում՝ հակամարտությունը: Ինձ համար դա լուրջ առաջընթաց է:

ԼԱՌԻՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՅԵՏԱԶՈՏՈՂ ՌԵԳԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ /ՐԱՅՈՒՄՆԵՐ/

Սիրելի ֆիլմը. «Չարմուհին Կովկասից»:
«Ինձ դուր է գալիս կերպարների անկեղծությունը»:

Հայաստանի տարբեր վայրերում լսարանը տարբեր կերպ էր արձագանքում հայերի ու ադրբեջանցիների մասին պարզ, մարդկային պատմություններին: Եթե ֆիլմի հերոսն ադրբեջանցի էր, արձագանքներն ու նրա ասածի նկատմամբ վստահությունը կախված էր լինում կինոդիտման վայրից: Անենթ, Կասպան քաղաքում, որը Ադրբեջանի սահմանին մոտ է գտնվում, երիտասարդները բացասականորեն վերաբերվեցին ադրբեջանական «Դաուլուդ» ֆիլմի երիտասարդին, որն Արամ Խաչատրյանի երաժշտության տակ «գնում էր հայերին սպանելու» (համակարգչային խաղում): Նրանք թերահավատորեն էին վերաբերվում տղայի անկեղծությանը և կարծում էին, որ նրան հանձնարարել են այդպես խոսել: Սակայն Հայաստանի հյուսիսային շրջանների և Երևանի լսարանները ճշմարտաման համարեցին, որ համակարգչային ռազմախաղերից կարելի է պատերազմի անխմաստության մասին դասեր քաղել:

Կային պատմություններ, որոնց բոլոր լսարանները միանման էին արձագանքում: Հայկական «Չարմուհին Կովկասից» ֆիլմն ամենուր հավանության էր արժանանում: «Ֆիլմն իսկապես ազդեց վրաս», - ասաց մի արմավիրցի երիտասարդ: «Տեսա, թե ինչպես էր այդ մարդը (Չինայի քեռին) դողում, երբ խոսում էր իր հին տան ու դարաբաղյան կյանքի մասին: Նա իսկապես տանջվում էր»: Գավառցի մի կին էլ ասաց. «Նա այնպիսի անկեղծությամբ էր ասում, որ վաղ թե ուշ խաղաղություն կտիրի, որ հայերն ու ադրբեջանցիները կրկին

համերաշխ կապրեն... Պարզապես սկսում ես հավատալ նրան»: Այդուհանդերձ, ադրբեջանցի հերոսի դրական օրինակը դիտվում էր որպես բացառություն, որն ընդհանուր առմամբ տարբերվում է ադրբեջանական հասարակությունից: «Նա Ադրբեջանում չի ապրում, հայերի մասին ոչ մի վատ բան չի ասում, պարզապես իր տունն է կարոտում: Մենք ուզում ենք իմանալ, թե Ադրբեջանի ժողովուրդն ինչ է մտածում, թե նրանք մեր մասին ինչ են խոսում»:

Ադրբեջանական «Շուշին՝ վրանի տակ» ֆիլմը նույնպես դարաբաղցի փախստականի մասին էր, սակայն այս անգամ՝ Բաքվում ապրող: Այն հայաստանյան բոլոր կինոդիտումների ժամանակ բանավեճ էր առաջացնում: Գործից մի կին ասաց. «Այս մարդը, իր նախկին հարևանների ու ծանոթների մասին պատմելով, հայերին վատաբանում էր: Պարզ չէ՞, որ հնարում է, երբ ասում է, որ կզնա Շուշի, և համերաշխ, կողք կողքի կապրեն: Իրականում նա այդպես չի մտածում, նա լի է ագրեսիայով»: Մի գյուղնեցի կին էլ վիրավորվել էր այդ մարդու՝ հայ կանանց մասին պատմած տհաճ պատմություններից:

Երիտասարդները հիմնականում հարգանքով էին լցվում ադրբեջանական «Վերածնունդ» և հայկական «Ճակատագիրը թակում է դուռը» ֆիլմերի վետերանների նկատմամբ: «Վերածնունդ» ֆիլմի կուրացած վետերանին չի վարկաբեկում նույնիսկ այն փաստը, որ նա կրկին պատերազմելու ցանկություն է հայտնում: «Երբ նրան հարցրին նորից պատերազմ գնալու

մասին, լսարանի արձագանքից զգացվում էր, որ հենց նրա պատասխանից է կախված իր՝ «լավը» կամ «վատը» լինելը: Իրականում, նրա պատասխանը կարևոր չէ: Յուրաքանչյուրն էլ գիտի, որ եթե պատերազմ լինի, բոլոր լավ մարդիկ պաշտպանելու են իրենց հայրենիքը»:

Կարելի՞ է ասել, որ «Կինտերկինությունները» կարողացան հայկական և ադրբեջանական լսարանների միջև կամուրջ գցել: Մի երիտասարդ նշեց, որ «եթե այսպիսի ֆիլմերը պարզապես պնդեին, թե որքան լավ են հայերն ու ադրբեջանցիները միմյանց հետ լեզու գտնում, նրանք անօգուտ ու անհետաքրքիր կլինեին», ավելացնելով, որ հայ լսարանն անկեղծությունն է նախընտրում՝ հայ-ադրբեջանական բարեկամության արհեստական պատկերների փոխարեն: Մեկ այլ երիտասարդ նշեց, որ «ադրբեջանցիների հետ իսկական երկխոսություն անցկացնելը չափազանց վաղ է: Այս ֆիլմերը, ավելի շուտ, մենախոսությունների են նման: Մենք իրար մեջ ենք այդ հարցերը քննարկում, թեպետ դա էլ է կարևոր քայլ»:



» ԶԱՅ ԼՍԱՐԱՆՆ ԱՆԿԵՂԾՈՒԹՅՈՒՆՆ Է ՆԱԽԸՆՏՐՈՒՄ՝ ԶԱՅ-ԱԴՐԲԵՉԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՐՅԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ:

ԼԱՌԻՂԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԾՐԱԳՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՂ



ԱՎԱԶ ԶԱՍԱՆՈՎ

ՉԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՉԱՄԱԿԱՐԳՈՂ /ԱՂԻՐԲԵԶԱՆ/

Սիրելի ֆիլմը. «Բոլոր ֆիլմերն էլ սիրո մասին են» և «Վերածնունդ»:
«Ես հետաքրքրվում եմ մարդկանցով և սիրում եմ այնպիսի ֆիլմեր, որոնք ինչ-որ մեկի կյանքի պատմությունն են ներկայացում»:

Այն մեկուկես տարիների ընթացքում, որ ցուցադրում էինք ֆիլմերը, նկատեցինք, որ թեև մարդիկ հաճախ սկզբից կասկածամիտ էին, նրանք մեծ պատրաստակամությամբ էին մասնակցում քննարկումներին. միայն թե պետք էր նրանց համար ճիշտ միջավայր ստեղծել:

Ես, որպես մոդերատոր, պետք է ղեկավարեի գործընթացը, մարդկանց խրախուսեի, որ դժվարին հարցեր տան և պատասխանեն այդ հարցերին: Եթե այդ ամենը ճիշտ ձևով արվի, արդյունքում հզոր ու հետաքրքիր քննարկում կստացվի:


Դրա վառ օրինակը մենք տեսանք Շեքիի կինոդիտման ժամանակ: Մենք ցուցադրում էինք «Բոլոր ֆիլմերն էլ սիրո մասին են» ֆիլմը, և ներկաների մեծ մասը, որպես կանոն, բացարձակ անտարբերություն էր դրսևորում խառն ամուսնությունից ստեղծված զույգի՝ Սլավիկի ու Էլմիրայի ճակատագրի նկատմամբ:

Ես նկատեցի մի ծեր կնոջ, որն ուզում էր ինչ-որ բան ասել, և երբ նրան խոսելու հնարավորություն տվեցինք, նա բանավեճի մասնակիցներին իսկապես ուշքի բերեց: «Մի՞թե բոլորը էլ այս պատերազմի միջով չեք անցել ու չեք կորցրել ձեր երիտասարդությունը»,- գոռաց նա: «Մի՞թե դուք էլ չեք կորցրել ձեր որդիներին ու դուստրերին, հայրերին ու եղբայրներին: Ինչպե՞ս կարող եք մտածել, որ միայն պատերազմի միջոցով կարելի է լուծել մեր խնդիրները»:

Երկրում ճամփորդելով՝ հասկացանք, որ շատերն իրականում քիչ բան գիտեն հակամարտության կամ հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին: Գյուղական վայրերում ապրող բազմաթիվ ադրբեջանցիների համար Չայաստանի ու հայերի թեման բոլորովին նոր էր: Իհարկե, մեծ քաղաքներում այդպես չէր, բայց գավառներում ոչ ոք զաղափար

չունեիր, թե հայերն ինչպիսին են: Ինչ էլ գիտեին՝ հեռուստացույցով էին տեսել: Ու մեկ էլ հանկարծ՝ մեր ֆիլմերն են նայում, իսկ Էլրանի վրա սովորական մի կին է՝ ճիշտ իրենց պես, միայն թե հայ է:

Ես, որպես մոդերատոր, անընդհատ պատասխանում էի հակամարտության մասին հարցերին: Նաև խոսում էինք այն մասին, թե նախկինում հարաբերություններն ինչպիսին էին: Պետք է լավ իմանաս հակամարտության նախապատմությունը, որպեսզի կարողանաս արձագանքել լսարանի կարծիքներին, բացատրություններին ու հարցերին: Շատերը հակամարտության մասին տարբեր տեսակետներ չեն էլ լսել. նրանք երբեմն ընդդիմանում են և չեն ցանկանում կասկածի տակ առնել այն, ինչ, իրենց կարծիքով, արդեն գիտեն:



» ԵՎ ԵԹԵ ՄԵՆՔ ՄԵՐ ԽՈՍՔԸ
ՉԱՄԵՆՔ, ՄԻՇՏ ԷԼ
ԿՐԱՅՏՆԱԿԵՆ ՈՒՐԻՇՆԵՐԸ,
ՈՐՈՆՔ ՄԵՐ ՓՈԽԱՐԵՆ
ՈՐՈՇՈՒՄ ԿԿԱՅԱՑՆԵՆ:


Մի անգամ, երբ ցուցադրում էինք «Բուրբ ֆիլմերն էլ սիրո մասին են» ֆիլմը, բարձրախոսները փչացան: Մինչ նորոգում էինք՝ մարդիկ ֆիլմն առանց ձայնի դիտեցին: Նրանք ցանկանում էին իմանալ, թե ինչի մասին է այն: Եվ ես պատմեցի, որ ֆիլմը հայ-ադրբեջանական խառն ամուսնության մասին է: Սակայն չասացի, թե ով ով է: Նրանք բոլորը համոզված էին, որ ամուսինը՝ Սլավիկը, ադրբեջանցի է, իսկ էլմիրան՝ հայ: Երբ ձայնը միացավ, հասկացան, որ սխալվել են և խիստ զարմացան: Հրաշալի էր: Ինձ համար դա լավ փորձ էր: Մարդկանց համար էլ էր լավ փորձ. նրանք հասկացան, որ իրոք չեն կարողանում տարբերել:

Երբեմն թշնամական արձագանքները, առանց մեր միջամտության, զարգանում, վերածվում էին կառուցողական բանավեճերի: Օրինակ, Գյանջայում համալսարանի դասախոսների հետ շատ դժվարին քննարկում ունեցանք:

Նրանց մեծ մասն անդրդվելի էր և պնդում էր, որ հայերի հետ խաղաղ հարաբերությունները վերականգնելն անիմաստ է: Միջին տարիքի մի կին մեզ՝ կազմակերպիչներին, մեղադրեց, որ չափազանց հանդուրժող ենք հայերի նկատմամբ: Սակայն խոսքը շարունակելիս՝ կրկնեց հենց այն, ինչ մենք էինք ասում. «Ադրբեջանը շահագրգռված է տարածաշրջանի կայունությամբ: Եվ դա վերաբերում է ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական կայունությանը»: Ես ու գործընկերս հայացքներս փոխանակեցինք ու թույլ տվեցինք, որ այդ կինն ավարտի իր խոսքը:

Ջալիլաբադի կինոդիտման ժամանակ լսարանը բաղկացած էր և՛ երիտասարդ, և՛ տարեց մարդկանցից: Մի երիտասարդ աղջիկ եռանդագին վիճում էր հայրենասիրական ֆիլմերի կարևորության մասին, ապա գրականության մի ուսուցիչ միջամտեց ու ասաց մի խոսք, որը

բոլորին ստիպեց մի պահ կանգ առնել ու մտածել. «Պատերազմը մեզ զրկել է մեր հողերից ու այս տարածքում հաշտ ու խաղաղ ապրելու հույսից: Մենք էլ ենք տառապել, հայերն էլ: Սակայն եթե տարածքն էլի դժոխք սարքենք, այս խոհերն այլևս նշանակություն չեն ունենա: Երկու ազգերն էլ պետք է հասկանան, որ այս տարածքը քաղաքական գործիչներին չի պատկանում, այն պատկանում է ժողովրդին, պատկանում է սերնդին, որը մեզնից հետո է գալու: Եվ եթե մենք մեր խոսքը չասենք, միշտ էլ կհայտնվեն ուրիշները, որոնք մեր փոխարեն որոշում կկայացնեն»:



» ԱՅՍ ՖԻԼՄԵՐԸ ՑՈՒՅՑ ԵՆ ՏԱԼԻՍ,
ՈՐ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆԸ
ՀՆԱՐԱԿՈՐ Է, ՈՒ ՀԵՆՑ ԴՐԱՆՈՎ ԵՆ
ՆՐԱՆԸ ԿԱՐԵՎՈՐ:

ԱՆԱՐԻՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ



ԱՆԱՅԻՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲԻ ԼՐԱԳՐՈՂ /ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ/

Սիրելի ֆիլմը. «Ամուր ընկույզ» և «8-րդ կիլոմետրին»:
«Այդ ֆիլմերն իսկապես սիրում եմ»:

Ղարաբաղի գրեթե բոլոր շրջաններում կինոդիտումներ ենք անցկացրել: Որոշել էինք հասնել ամենահեռավոր շրջանները, ինչպես նաև հիմնական քաղաքներն ու գյուղերը: Միջոցառումներ անցկացրել ենք տարբեր տեղերում. դպրոցներում, մշակույթի տներում, կինոթատրոններում: Մի անգամ Նույնիսկ ամառային ճամբարում ենք բացօթյա կինոդիտում կազմակերպել:

Սկզբում մտածում էինք՝ արժե՞ արդյոք այսպիսի ֆիլմեր ցուցադրել պատերազմ անցած մարդկանց: Բայց մեկուկես տարիների ընթացքում հասկացանք, որ մարդիկ իսկապես ցանկանում են և՛ աղբյուրական ֆիլմերը դիտել, և՛ հայկական: Դիտելուց հետո էլ հաճույթով մասնակցում են թե՛ թնամարկումներին:

Կինոդիտումից առաջ որոշում էինք, թե որ ֆիլմերը ցուցադրենք՝ հաշվի առնելով լսարանի տեսակն ու տարիքային խումբը: Միշտ երկու կողմերի ֆիլմեր ենք ցուցադրել: Զննարկումները, սովորաբար, բավականին բուռն էին լինում ու հաճախ ավելի ծավալուն, քան ֆիլմերի թեմաները: Բոլորն ուզում էին քննարկել հակամարտության լուծման մեծ հարցը: Երբեմն դա խանգարում էր բարձրացնել պլանավորած հարցերն ու թեմաները:

Հաճախ լսարանում ներկա էին լինում այնպիսի մարդիկ, ովքեր ապրել էին Էկրանին ցուցադրվող փորձությունները. իրենք կամ իրենց հարազատները դժվարին ընտրության առջև. էին կանգնած եղել: Դա հատկապես վերաբերում էր խառն ամուսնություններին կամ գերիներին:

Ղարաբաղում շատերը համարեցին, որ ֆիլմերն իրատեսուրեն են ներկայացնում հակառակ կողմի մարդկանց մտածելակերպը, ինչպես նաև նրանց պատկերացումներն անցյալի ու ներկայի մասին: Նրանց նաև դուր եկավ, որ աղբյուրականները հնարավորություն կունենան տեսնել Ղարաբաղի իրական կյանքն ու հայտնաբերել, որ, հակառակ իրենց իմացածի, ղարաբաղցիները հրեշներ չեն:

Այնպիսի ֆիլմեր, ինչպիսին է, օրինակ, «Իմ թշնամին՝ իմ ընկերը», հակասական զգացմունքներ էին առաջացնում: Մարդկանց համար ծանր էր լսել, թե գերիների ու պատանդների հետ ինչպես են վարվել:

Թեև ֆիլմը հակամարտության երկու կողմից էլ պատմություններ էր պարունակում, լսարանի համար դժվար էր ընդունել, որ ֆիլմում հավասարակշռություն կա: Նրանք անհանգստանում էին, որ

աղբյուրական գերիների պատմածներից կառաջանա այն տպավորությունը, որ հայերն ավելի ազդեցիկ են:

Ղարաբաղում շատերը դիտում են աղբյուրական հեռուստաալիքներ: Ոմանք ասացին, որ ֆիլմերից մի քանիսի հերոսների խոսքերում նկատել են այդ ալիքներով ներկայացվող՝ պաշտոնական Աղբյուրականի ռազմական հռետորաբանության արձագանքները: Նրանց կարծիքով, այդպիսի հռետորաբանությունն ավելի հեռավոր ու աղոտ է դարձնում խաղաղության գաղափարը:

Երբեմն ինձ հարցնում են, թե որն է «Կինոերկխոսությունների» իմաստը: Ես մտածում եմ, որ կար ժամանակ, երբ հազիվ թե որևէ ղարաբաղցի ի վիճակի լիներ դիտել այսպիսի ֆիլմեր: Սակայն հիմա որոշ բաներ փոխվել են, և մարդիկ այդ թեմաներով հետաքրքրվում են: Մենք պատերազմում կռվել ենք, իսկ հիմա պետք է միմյանց հետ խոսելու և աշխատելու ինչ-որ ձև գտնենք: Կարծում եմ, դեռևս վաղ է միասին ապրելու մասին խոսելը: Մինչ այդ դեռ շատ աշխատանքներ պետք է տարվեն: Բայց այս ֆիլմերը ցույց են տալիս, որ համատեղ աշխատանքը հնարավոր է, ու հենց դրանով են նրանք կարևոր:



ՄԱՍ 3

» «ԿԻՆՈՏԵՐԿԻՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»
ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ
ԿՈՂՄԸ:



ԲԱՌԱՐԱՆ

ԱՉՍԱԳՐԿԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Այս տերմինը հաճախ է օգտագործվում հայկական աղբյուրներում: Այն Լեռնային Ղարաբաղին հարակից և հայկական վերահսկողության տակ գտնվող տարածքների սահմանումն է: Դրանք հաճախ կոչվում են նաև «անվտանգության գոտի» կամ «բուֆերային գոտի»:

ԳՐԱԿՅԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Աղբրեջանում այս տերմինն օգտագործում են, որպեսզի նկարագրեն հայկական վերահսկողության տակ գտնվող Լեռնային Ղարաբաղն ու հարակից տարածքները: Ինչ վերաբերում է միջազգային հանրությանը (թեպետ հստակ կանոն չկա), այս տերմինը, սովորաբար, ենթադրում է Լեռնային Ղարաբաղին հարակից տարածքները, որոնք գտնվում են հայկական վերահսկողության ներքո:

ԴԵ ՖԱԿՏՈՂԵ ՅՈՒՐԵ

Դե ֆակտո պետությունը միջազգային հանրության կողմից ճանաչված չէ, թեև այն կարող է ունենալ պետականության այլ հատկանիշներ: Դե յուրե պետությունը ճանաչված է այլ պետությունների կողմից և կարող է նրանց հետ դիվանագիտական հարաբերությունների մեջ մտնել:

ԵԱՅԿ

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը, որը լիազորված է, Մինսկի խմբի միջոցով, ղարաբաղյան հակամարտությունում միջնորդի դեր կատարել: Այն 57 անդամ ունի, ներառյալ՝ Չայաստանն ու Աղբրեջանը: ԵԱՅԿ-ն նաև վերահսկում է շփման գիծը և, ժամանակ առ ժամանակ, իրականացնում փաստափոխաբան առաքելություններ՝ գործ ունենալով այնպիսի խնդիրների հետ, ինչպիսին է, օրինակ, Լեռնային Ղարաբաղի

հարակից տարածքներում բնակեցման գործընթացը:

ԵՄՅՆ /ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ/

Եվրոպական միության հատուկ ներկայացուցիչը, սովորաբար, լիազորվում է զբաղվել կոնկրետ խնդիրներով կամ աշխատել կոնկրետ տարածաշրջանների, ասենք՝ Չարավային Կովկասի հետ:

ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ

Միջազգային իրավունքի սկզբունք, ըստ որի՝ ազգերն իրավունք ունեն որոշել իրենց սեփական քաղաքական կարգավիճակը:

ԼԱԶԻՆԻ ՄԻՋԱՆՅԸ

Լաչինի շրջանով անցնող տարածքը, որը միջանցքի պես կապում է Լեռնային Ղարաբաղը Չայաստանին: Չայաստանցիների՝ միջանցքից օգտվելու երաշխավորված հնարավորությունը Մադրիդյան սկզբունքների բանակցային գործընթացի մասն է կազմում:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ

Տարածք, որն ընդհանուր առմամբ համապատասխանում է Աղբրեջանի հորիզոնային Չանրապետության սահմաններում 1923թ. ստեղծված ու մեծամասամբ տեղացի հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կամ ԼՂԻՄ-ի տարածքին: 1989 թվականին ԼՂԻՄ-ի բնակչությունը կազմում էր 189 000 մարդ, որից 76,9% հայեր էին, իսկ 21, 5%՝ աղբրեջանցիներ: Չայերը Լեռնային Ղարաբաղն անվանում են Արցախ, որն այդ տարածքի միջնադարյան անունն է, կամ Լեռնային Ղարաբաղի Չանրապետություն (ԼՂՉ) դե ֆակտո պետություն: ԼՂՉ-ն իրեն դիտարկում է որպես նախկին ԼՂԻՄ-ի տարածքի, ինչպես նաև, որոշ չափով, հայկական զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող հարակից տարածքների նկատմամբ գերագույն

իշխանություն ունեցող պետություն: Աղբրեջանցիները Լեռնային Ղարաբաղն անվանում են Դաղլիզ Ղարաբաղ:

ԽԱՂԱՂԱՊԱՅ ՈՒԺԵՐ

Խաղաղության համաձայնագիրը վերահսկելու և իրականացնելու լիազորություն ունեցող զինվորները, ոստիկանական սպաներն ու քաղաքացիական անձնակազմը:

ՀԱՆՐԱՔԿԵ

Զվեարկություն, որի ընթացում ողջ ընտրազանգվածը պետք է որոշակի հարցի կամ հարցերի վերաբերյալ իր կարծիքն արտահայտի: Մադրիդյան սկզբունքների համատեքստում այս տերմինը վերաբերում է հնարավոր ապագա քվեարկությանը, որի ընթացքում Լեռնային Ղարաբաղում ապրող և նախկինում ապրած բնակչությունը պետք է կարծիք հայտնի տարածքի կարգավիճակին առնչվող տարբերակների վերաբերյալ:

ՄԱԴՐԻԴՅԱՆ ՍԿՉՔՈՒՆՔՆԵՐ

Ներկայումս հայ-աղբրեջանական բանակցությունների հիմքը կազմող գաղափարների կամ հիմնական սկզբունքների ամբողջությունը: Սկզբունքներն առաջացել են Չայաստանի և Աղբրեջանի արտաքին գործերի նախարարների մի շարք հանդիպումների ընթացքում, որոնք հայտնի են «Պրահայի գործընթաց» անվանումով և, 2007թ.-ից ի վեր, քննարկվել են տարբեր ձևաչափերով: Հիմնական գաղափարները հետևյալն են. տարածքների ազատում, խաղաղապահ ուժերի տեղակայում, փախստականների վերադարձ, Լաչինի միջանցքի ստեղծում և Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը որոշող հանրաքվե:

ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲ

Դիվանագիտական խումբ, որն ստեղծվել է Չայաստանի ու



Աղբբեջանի նախագահների բանակցությունները դյուրինացնելու նպատակով: Մինսկի խումբն ունի երեք համանախագահ, որոնք ներկայացնում են, համապատասխանաբար, Ֆրանսիան, Ռուսաստանը և Միացյալ Նահանգները:

ՄԻջԱԳԿԱՅԱԼ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Միջազգայնորեն ճանաչված կարգավիճակի տեսակ, որից կարող են օգտվել Լեռնային Ղարաբաղի իշխանությունները՝ հակամարտության կարգավորման հիմնական սկզբունքների վերաբերյալ նախնական համաձայնագրի ստորագրման ու համապարփակ խաղաղության վերջնական համաձայնագրի ստորագրման միջև ընկած ժամանակահատվածում: Դա կարող է դիտվել որպես դե ֆակտո և դե յուրե կարգավիճակների միջանկյալ ձև, թեև դրա բովանդակային մասը դեռևս բանակցությունների առարկա է:

ՆԵՐՔԻՆ ՓԱԽՍԱԿԱԼ

Անձ, որը հակամարտության պատճառով ստիպված է եղել իր տունը լքել, սակայն միջազգայնորեն ճանաչված սահման չի անցել:

ՇԱՀՈՒՄՅԱԼ

Լեռնային Ղարաբաղից գատ՝ Աղբբեջանի միակ հայաբնակ շրջանը պատերազմից առաջ: Գտնվում է Ղարաբաղի հյուսիսային սահմանի մոտ:

ՇՈՒՇԻ

Լեռնային Ղարաբաղի նախկին մայրաքաղաքը: Հակամարտությունից առաջ՝ տարածքի միակ աղբբեջանաբնակ քաղաքը, որի բնակչության թիվը 1989 թվականին 17,000 էր: 2005 թվականին քաղաքն ուներ մոտավորապես 4,300 բնակիչ, որոնցից շատերը Բաքվից ու Աղբբեջանի այլ վայրերից տեղահանված հայեր էին: Քաղաքի աղբբեջանական անվանումը Շուշա է:

ՇՓՄԱԼ ԳԻԾ

Հայկական ու աղբբեջանական զինված ուժերի միջև մոտ 100 մղոն ձգվող ճակատի գիծը:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքը՝ 1923թ. սկսած: Կառուցվել է հին հանքենդի գյուղի տարածքում (շատ աղբբեջանցիներ այդ անվանումն են օգտագործում):

ՎԵՐԱԴԱՐՁԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Ըստ միջազգային իրավունքի՝ փախստականներն իրավունք ունեն վերադառնալ իրենց նախկին բնակավայրը, ինտեգրվել ու ապրել այնտեղ, որտեղ տվյալ պահին բնակվում են, կամ էլ տեղափոխվել մեկ այլ՝ երրորդ վայր: Վերադարձի իրավունքը նախատեսված է Մադրիդյան սկզբունքներով:

ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱԶՏԱՌՄ

Լեռնային Ղարաբաղին հարակից

տարածքների ազատումը նախատեսված է Մադրիդյան սկզբունքներով, թեև այս գործընթացի ժամկետներն ու գործողությունների հերթականությունը դեռևս բանակցության առարկա են:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Միջազգային իրավունքի սկզբունք, ըստ որի՝ միջազգային սահմանները չեն կարող բռնի ուժով փոփոխվել:

ՓԱԹԵԹԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Ղարաբաղյան հակամարտության լուծման տարբերակ, որը քննարկվում էր 1990-ականներին: Այդ մոտեցմամբ, շեշտը դրվում էր բոլոր ակնառու պորբլեմների (ներառյալ՝ կարգավիճակը) միաժամանակյա լուծման վրա:

ՓԱԽՍԱԿԱԼ

Անձ, որը հակամարտության պատճառով ստիպված է եղել իր տունը լքել և անցել է միջազգայնորեն ճանաչված սահման:

ՓՈՒԼԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Ղարաբաղյան հակամարտության լուծման տարբերակ, որը քննարկվում էր 1990-ականներին: Այդ մոտեցմամբ՝ շեշտը դրվում էր տարբեր պորբլեմների լուծման փուլային գործընթացի վրա՝ պլանավորելով կարգավիճակի ինդիորը լուծելի ավելի ուշ:

ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Ո՞վ է ֆինանսավորում «Կինոերկխոսությունները»:

Մի քանի տարի շարունակ «Կինոերկխոսությունները» ֆինանսավորվում էին Մեծ Բրիտանիայի կառավարության տրամադրած դրամաշնորհի օգնությամբ, Միացյալ Թագավորության «Հակամարտությունների կանխարգելման հիմնադրամի» միջոցով: 2010թ. հետո նախաձեռնությունը ֆինանսավորվում էր Եվրոպական միության դրամաշնորհի միջոցով, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված եվրոպական գործակցության ծրագրի (ԼՂԵԳ) շրջանակներում:

Պե՞տք է վճարել «Կինոերկխոսությունների» ցուցադրության իրավունքի համար:

Ոչ, «Կինոերկխոսությունների» տեսասկավառակների կամ ֆիլմերի ցուցադրության իրավունքի համար պետք չէ վճարել: Այնուամենայնիվ, պետք է հիշել, որ սկավառակների և ձեռնարկների թիվը սահմանափակ է:

«Կինոերկխոսությունները» կշարունակվե՞ն:

Այո, պլանավորված է շարունակել նախաձեռնությունը: 2011թ. «Կինոերկխոսությունների» շրջանակներում նոր ֆիլմ թողարկվեց: Ֆիլմը կոչվում է «Հիշողություններ առանց սահմանների»: Այն թուրք, հայ և ադրբեջանցի ռեժիսորների համատեղ աշխատանքի արդյունքն է: Նրանցից ոմանք նաև այս ձեռնարկին կցված սկավառակների ֆիլմերի հեղինակն են: Մանրամասն տեղեկությունների համար՝ այցելեք «Հաշտեցման ռեսուրսների» ինտերնետային կայքը. www.c-r.org/MWB

Ո՞վ է ընտրում ֆիլմերի թեմաները:

Նախաձեռնությանը մասնակցող երիտասարդներն են որոշում, թե ֆիլմն ինչի մասին է լինելու: «Հաշտեցման ռեսուրսների» դերը բացառապես գործընթացի դյուրինացումն է:

Համատեղ ֆիլմերն ինչպե՞ս էիք արտադրում:

Յուրաքանչյուր նոր ֆիլմաշարից առաջ մասնակիցները հանդիպում էին Վրաստանում և մտքային գրոհ անցկացնում: Խումբն ընտրում էր, թե ինչ թեմայով պետք է լինի ֆիլմը, ապա որոշվում էր, թե յուրաքանչյուր կողմից ով է աշխատելու ֆիլմի վրա: Ապա յուրաքանչյուր ֆիլմի երկու հեղինակները քննարկում էին սյուժեի մոտավոր, ընդհանուր նկարագիրն ու վերադառնում տուն, որպեսզի ամեն մեկը նկարահանի իր հատվածը: Հաջորդ փուլում նրանք կրկին հանդիպում էին Վրաստանում, դիտում հում նյութն ու համաձայնեցնում, թե ինչպես պետք է մոնտաժեն ու մի ընդհանուր ֆիլմ պատրաստեն: Վերջնական մոնտաժն արվում էր կամ Ինտերնյուս Հայաստանում, կամ Ինտերնյուս Ադրբեջանում: Յուրաքանչյուր փուլի ֆիլմերի կեսը Հայաստանում էր մոնտաժվում, կեսը՝ Ադրբեջանում:

Որտե՞ղ են ցուցադրվել «Կինոերկխոսությունները»:

2010թ. օգոստոսից մինչև 2011թ. նոյեմբերն ընկած ժամանակահատվածում Եվրոպական միությունն աջակցել է «Կինոերկխոսությունների» 90 ցուցադրություններին, որոնցից 30-ը՝ Հայաստանում, 30-ը՝ Լեռնային Ղարաբաղում և 30-ը՝ Ադրբեջանում: Ցուցադրություններից յուրաքանչյուրին հաջորդել է քննարկումը՝ մոդերատորի մասնակցությամբ: Հայաստանի,

Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի հիմնական քաղաքներում ու ավաններում տեղի ունեցած միջոցառումներին մասնակցել է ավելի քան 3200 մարդ: Մանրամասն տեղեկությունների համար՝ այցելեք «Հաշտեցման ռեսուրսների» ինտերնետային կայքը՝ www.c-r.org:

Ընդհանուր առմամբ, քանի՞ ֆիլմ է թողարկվել:

Ընդհանուր առմամբ ստեղծվել է 35 ֆիլմ: Մի քանիսը դեռևս արտադրության փուլում են, և մենք հույս ունենք դրանք թողարկել «Կինոերկխոսությունների» հետագա շարքում:

Ինտերնետում կարո՞ղ ենք գտնել «Կինոերկխոսությունները»:

«Կինոերկխոսությունները» կարող եք գտնել Vimeo-ում. <http://vimeo.com/channels/df>

Քաղաքական առաջնորդները տեսե՞լ են այս ֆիլմերը:

«Կինոերկխոսություններն» ակտիվորեն տարածվել են Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գործերի նախարարություններում աշխատող պաշտոնյաների և նախագահական աշխատակազմերի անդամների շրջանում: Դրանք նաև տրամադրվել են Լեռնային Ղարաբաղի իշխանություններին:

Ինչպե՞ս էիք սահմանում «հավասարակշռություն» հասկացությունը, և որքանո՞վ է «հավասարակշռված» այս նախաձեռնությունը:

Ղարաբաղյան հակամարտության յուրաքանչյուր կողմում գտնվող մարդիկ «հավասարակշռություն» հասկացությունը տարբեր ձևով են սահմանում և հաճախ են օգտագործում հավասարակշռության գաղափարը, որպեսզի քննադատեն

այն նախաձեռնությունները, որոնք, իրենց կարծիքով, բավարար չափով չեն ներկայացնում իրենց տեսակետները:

«Կինտերկիստություններում» մենք ձգտել ենք հավասարակշռություն պահպանել ոչ միայն թվաքանակի, այլ նաև որակի իմաստով: Սա նշանակում է, որ միշտ չէր, որ ստացվում էր թվային հավասարակշռություն պահպանել՝ թողարկված ֆիլմերի քանակության առումով: Սակայն ամեն ինչ անում էինք, որ հիմնական թեմաները համապատասխան ու համաչափ ուշադրության արժանանան՝ այնպես, ինչպես ընկալում էր կողմերից յուրաքանչյուրը:

Ինչո՞ւ եք աշխատում հատկապես Լեռնային Ղարաբաղի հայերի հետ:

Հայ-ադրբեջանական երկխոսությանն ուղղված նախաձեռնությունների մեծ մասը շեշտը դնում է Հայաստանի և Ադրբեջանի վրա: Արդյունքում, Լեռնային Ղարաբաղի բնակչությունը դուրս է մնում բազմաթիվ խաղաղաստեղծ նախաձեռնություններից, ինչպես նաև պաշտոնական խաղաղարար գործընթացից: Մենք մտածեցինք, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության համար խիստ կարևոր է խաղաղաստեղծ գործընթացում ձայնի իրավունք ունենալ, քանի որ այդ բնակչությունը խաղաղության վերջնական համաձայնագրում կենտրոնական դեր է խաղալու: «Կինտերկիստությունները» «Հաշտեցման ռեսուրսների» կողմից աջակցվող մի շարք նախաձեռնություններից մեկն է: Մյուս նախաձեռնություններում շեշտը դրվում է սոցիալական ու ժողովրդագրական այլ խմբերի վրա, ինչպիսիք են լրագրողները, քաղաքական գործիչները, փորձագետները, փախստականները

(այդ թվում՝ ներքին փախստականները) և դարաբաղցի ադրբեջանցիները:

Շարքային հայերն ու ադրբեջանցիները կարո՞ղ են հակամարտության լուծման գործում իրական ներդրում ունենալ:

Հաճախ ասում են, որ դարաբաղյան հակամարտությունը կարող են լուծել միայն Հայաստանի ու Ադրբեջանի նախագահները, կամ էլ՝ դրսի աշխարհաքաղաքական ուժերը: Սակայն մենք գտնում ենք, որ տևական խաղաղություն կարելի է ձեռք բերել միայն սովորական հայերի ու ադրբեջանցիների համաձայնությամբ, քանի որ միայն այդ համաձայնության շնորհիվ կարող են բոլոր կողմերն անհրաժեշտ փոխզիջումների գնալ: Սովորական հայերն ու ադրբեջանցիները կարող են ինչ-որ բան փոխել՝ ընտրության հնարավոր տարբերակների մասին տեղեկացված լինելով, հակամարտության խաղաղ կարգավորման ջանքերի մասին պատմելով իրենց տեղական համայնքում, դպրոցներում, համալսարաններում, հասարակական-քաղաքական գործունեության միջոցով, ինչպես նաև քաղաքական գործիչներին խնդրելով, որ հակամարտությանը վերաբերող հայտարարություններում ու դիրքորոշումներում ավելի պատասխանատու և պակաս միակողմանի մոտեցում ցուցաբերեն:



ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ալ Զազիրան համաշխարհային իրադարձությունների, Միջին Արևելքի ու Հարավային Կովկասի վերաբերյալ նորությունների ու տեղեկատվության օգտակար աղբյուր է:

» www.aljazeera.com

Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայանը պարբերաբար ներկայացնում է նորությունների մանրամասն թողարկումներ՝ նյութերը հրատարակելով ու հեռարձակելով նաև հայերեն ու ադրբեջաներեն:

» www.azatutyun.am

» www.azadliq.org

» www.rferl.org

Անալիտիկոնը Ստեփանակերտի մամուլի ակումբի կողմից հրատարակվող վերլուծական ամսագիր է: Անգլերեն և ռուսերեն տարբերակները կարող եք գտնել ինտերնետում:

» www.theanalyticon.org

Ղարաբաղի կոնտակտային խումբը (ՂԿԽ) «Հաշտեցման ռեսուրսների» կողմից աջակցվող

նախաձեռնություն է, որը ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ՝ քաղաքականության փոփոխությանն ուղղված մտածելակերպ է ստեղծում: ՂԿԽ-ի առաջին զեկույցը՝ «Բռնի տեղահանումը ղարաբաղյան հակամարտության մեջ. վերադարձը և այլընտրանքային տարբերակները», հայ, ադրբեջանցի և այլազգի փորձագետների հոդվածների հավաքածու է՝ ղարաբաղյան հակամարտության արդյունքում փախստական դարձած մարդկանց դժվարությունների մասին:

» www.c-r.org/NK_IDP

Ճգնաժամի միջազգային խումբը ղարաբաղյան հակամարտության ու Հարավային Կովկասի վերաբերյալ պարբերաբար վերլուծական

զեկույցներ ու համառոտագրեր է հրատարակում:

» www.crisisgroup.org

Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտն

աջակցում է աշխարհի կոնֆլիկտային իրավիճակները լուսաբանող անկախ լրագրողներին: Ինստիտուտը Կովկասում գործում է ավելի քան տասը տարի:

» www.iwpr.net/programme/caucasus

Accord 17-րդ համար, Առաջնորդների հնարավորությունների սահմանափակումները. Էլիտաները և հասարակությունները Լեռնային Ղարաբաղի շուրջ խաղաղության հաստատման գործընթացում «Հաշտեցման ռեսուրսների»՝ 2006 թվականից գոյություն ունեցող Accord հանդեսի այս հրատարակությունը Լեռնային Ղարաբաղի շուրջ իրականացվող խաղաղարար գործընթացի տարբեր կողմերին առնչվող համառոտ ակնարկների հավաքածու է: Կարող եք գտնել նաև ռուսերեն, ինչպես նաև հայերեն ու ադրբեջաներեն տարբերակները:

» www.c-r.org/accord/nagorny-karabakh

BBC-ի կայքը ադրբեջաներեն լեզվով նորություններ է ներկայացնում Ադրբեջանի, ինչպես նաև ողջ տարածաշրջանի վերաբերյալ:

» www.bbcazeri.com

Caucasus Edition-ը անկախ ինտերնետային հրատարակություն է, որը գիտնականներին, պրակտիկ փորձագետներին, քաղաքական վերլուծաբաններին, երիտասարդ հետազոտողներին ու բլոգերներին հնարավորություն է տալիս վերլուծել, ինչպես նաև քննարկել ղարաբաղյան հակամարտությունն ու նրա կարգավորումը:

» www.caucasusedition.net

Commonspace-ը անկախ ինտերնետային ֆորում է, որը նպաստում է հայ-ադրբեջանական հարաբերությունների, ինչպես նաև կովկասյան տարածաշրջանի ապագայի վերաբերյալ երկխոսությանը: Սա LINKS-ի (տե՛ս ստորև), Arminfo և 1news.az լրատվական գործակալությունների համատեղ նախագիծն է:

» www.commonspace.eu

Peacebuilding Portal-ը տվյալների բազա է, որը խաղաղաստեղծ նախաձեռնությունների վերաբերյալ առատ տեղեկություններ է պարունակում: Տեղեկությունները դասակարգված են ըստ երկրների, տարածաշրջանների և կազմակերպությունների:

» www.peacebuildingportal.org

The Neutral Zone-ը Հայաստանի ու Ադրբեջանի համար այլընտրանքային հարթակ է, որտեղ քննարկվում են սոցիալական ու մշակութային այնպիսի հարցեր, ինչպիսիք են ավանդույթները, մշակույթը, կրթությունը, առողջապահությունը, հասարակությունը, ինչպես նաև այնպիսի «զգայուն» թեմաներ, ինչպիսիք են ընտանեկան բռնությունը, փոքրամասնությունների իրավունքները և այլն:

» www.imagineneutralzone.com

ՀԱՅԿԱԿԱՆ, ԱՂԻՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Ազգային ու միջազգային ուսումնասիրությունների հայկական կենտրոնը

ռազմավարական հետազոտությունների կենտրոն է, որը ղարաբաղյան հակամարտության և այլ ազգային ու տարածաշրջանային հարցերի վերաբերյալ քաղաքական հետազոտություններ ու մեկնաբանություններ է ներկայացնում:

» www.acnis.am

Արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով հանրային խորհուրդը

Ստեփանակերտում տեղակայված վերլուծական կենտրոն է: Տեղեկությունների համար դիմեք Մասիս Մայիլյանին:

» www.facebook.com/MasisMayilian

Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը

հետազոտական հաստատություն է, որը զբաղվում է ղարաբաղյան հակամարտությամբ և այլ հարցերով:

» www.acgrc.am

Դիլարա Ալիևայի՝ կանանց իրավունքների պաշտպանության ընկերակցությունը

կանանց տրամադրում է խորհրդատվություն՝ բազմապիսի սոցիալական ու քաղաքական հարցերով:

» novellajafarova@gmail.com

Երևանի մամուլի ակումբը

մասնագիտական միավորում է, որը նպաստում է լրատվական դաշտի զարգացմանը: 1995 թվականից սկսած՝ ակտիվորեն զբաղվում է հայ և ադրբեջանցի լրագրողների համագործակցության խնդիրներով:

» www.ypc.am

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը

գրասենյակներ ունի Հայաստանում և Ադրբեջանում: Այն աջակցում է հայ-թուրքական մերձեցման նախաձեռնություններին, ինչպես նաև հայ-ադրբեջանական հարաբերությունների անկողմնակալ լուսաբանմանը:

» www.epfound.org

«Հելսինկյան նախաձեռնություն-92» կազմակերպության ԼՂ կոմիտեն

խաղաղաստեղծ ՀԿ է, որը զբաղվում է Լեռնային Ղարաբաղում մարդու իրավունքների պաշտպանությամբ, մարդկանց անվտանգությամբ ու քաղաքացիական հասարակության զարգացմամբ, ինչպես նաև նպաստում է Լեռնային Ղարաբաղի ինտեգրմանը գլոբալիզացիայի գործընթացներին:

» www.hca.nk.am

Լրագրողների ազատության և անվտանգության ինստիտուտը

ադրբեջանական ՀԿ է, որը զբաղվում

է լրագրողների իրավունքներով, գործնական աջակցություն է ցուցաբերում բռնության ենթարկված լրագրողներին, նպաստում արտահայտման ազատությանը:

» www.irfs.az

Խաղաղության երկխոսությունը

Վանաձորում տեղակայված հասարակական կազմակերպություն է, որը միավորում է Հայաստանի, Ռուսաստանի, Վրաստանի ու Գերմանիայի խաղաղարարներին:

» www.peacedialogue.am

Խաղաղաստեղծ նախաձեռնությունների կովկասյան կենտրոնը (ԽՆԿԿ)

հայ-թուրքական և հայ-ադրբեջանական կինոփառատոներ է կազմակերպում:

» vanyanouth@caucasus.com

Խաղաղության ու ժողովրդավարության ինստիտուտը

զբաղվում է Ադրբեջանում մարդու իրավունքների պաշտպանությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով գեղեցիկ հարցերին:

Կազմակերպությունը նաև զբաղվում է ղարաբաղյան հակամարտության և միգրացիայի խնդիրներով:

» www.tt-ipd.info



Կովկասի ինստիտուտը

Երևանում տեղակայված վերլուծական կենտրոն է, ինչպես նաև կրթական հաստատություն, որը զբաղվում է հարավկովկասյան խնդիրներին (այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը) առնչվող բանավեճերով և հետազոտություններով:

» www.caucasusinstitute.org

Չականարտությունների կարգավորման «Imagine» կենտրոնը

անկախ, ոչ քաղաքական կազմակերպություն է, որը փորձում է բարեփոխել հարաբերություններն ու Չայաստանում և Ադրբեջանում հիմքեր դնել կայուն ու տևական խաղաղության համար:

» www.imaginedialogue.com

Հայաթը ներքին փախստականների հարցերով զբաղվող ադրբեջանական հասարակական կազմակերպություն է:

» www.hayat.az

Չելսինկյան քաղաքացիական ասամբլեայի ադրբեջանական ազգային կոմիտե

Չելսինկյան քաղաքացիական ասամբլեայի մասնաճյուղ է: 1992 թվականից ի վեր այն զբաղվում է մարդու իրավունքներին վերաբերող լայնամասշտաբ հարցերով, ինչպես նաև հակամարտությանն առնչվող երկխոսությունների նախաձեռնություններով: Այն նաև շփումներ ունի Ղարաբաղյան

խորհրդի հետ, որը հակամարտության փորձագետների ու ակտիվիստների ցանց է:

» www.hca-anc.org

Չետաքննող լրագրողների «Ռեզիոն» կենտրոնը

Երևանում տեղակայված լրագրողական կազմակերպություն է, որը լուսաբանում է բազմապիսի թեմաներ, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հարցը:

» www.hetq.am

Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված եվրոպական գործակցությունը

(ԼՂԵԳ) քաղաքացիական հասարակությանն առնչվող եվրոպական նախաձեռնություն է՝ կազմված հինգ միջազգային խաղաղաստեղծ ՉԿ-ներից («Չաշտեցման ռեսուրսներ», Ճգնաժամային կառավարման նախաձեռնություն, International Alert, Kvinna til Kvinna և LINKS), որոնք աշխատում են 16 տեղական գործընկերների հետ ու աջակցում ԼՂ-ի խաղաղարար գործընթացին:

Ճգնաժամային կառավարման նախաձեռնությունը

Ֆիննական անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը զբաղվում է կոնֆլիկտների կարգավորմանն ու տևական խաղաղության ստեղծմանն առնչվող ծրագրերով:

» www.cmi.fi

Մարդկային զարգացման

միջազգային կենտրոնը Երևանում տեղակայված վերլուծական կենտրոն է, որը քաղաքականության շուրջ բանավեճեր է կազմակերպում, ինչպես նաև հետազոտություններ անցկացնում բազմազան թեմաներով, ներառյալ՝ ղարաբաղյան հակամարտությունը:

» www.ichd.org

Ներքին փախստականների ադրբեջանական միությունը

օգնում է փախստականներին՝ մասնակցել խաղաղարար գործընթացին:

» kerimli.kerim@gmail.com

Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնը

Ստեփանակերտում տեղակայված հասարակական կազմակերպություն է, որը զբաղվում է անհայտ կորածների ու ռազմագերիների հարցերով, ինչպես նաև գեղեցիկ խնդիրներով:

» albert57@mail.ru

Քաղաքացիական հասարակության ինստիտուտը

Երևանում տեղակայված հասարակական կազմակերպություն է, որն իրականացնում է ժողովրդավարության սկզբունքներին ու մարդու իրավունքներին առնչվող ծրագրեր, հետազոտություններ ու պատրաստում հրապարակումներ:

» www.csi.am

» **ՏԵՎԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԵԼԻ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՄԻԱՅՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՈՐ ԱՂԻԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ, ԶԱՆԻ ՈՐ ՄԻԱՅՆ ԱՅՂ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԸՆՈՐՀԻՎ ԿԱՐՈՂ ԵՆ ԲՈԼՈՐ ԿՈՂՄԵՐՆ ԱՆՐԱԺԵՇՏ ՓՈԽՉԻՋՈՒՄՆԵՐԻ ԳՆԱԼ:**

Սիվիլիթաս հիմնադրամը

զբաղվում է Հայաստանին առնչվող միջազգային ու ազգային հարցերով, կազմակերպում բանավեճեր:
 » www.civilitasfoundation.org/cf/
 » www.civilnet.tv/home/

IKV Pax Christi-ն հոլանդական կրոնական կազմակերպություն է, որը զբաղվում է խաղաղության և մարդու իրավունքների հարցերով: Կազմակերպությունը ջանում է հակամարտության գոտիներում անցկացվող խաղաղարար նախաձեռնություններին բարոյական ու քաղաքական աջակցություն ցույց տալ: IKV Pax Christi-ն, աշխարհի 25 երկրների տեղական ու միջազգային գործընկերների հետ միասին, 1992 թվականից ի վեր երկխոսությանը, վստահության ստեղծմանն ու մարդու իրավունքներին առնչվող աշխատանքներ է իրականացնում Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, ինչպես նաև այնպիսի չճանաչված տարածքներում, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղը, Հարավային Օսեթիան և Աբխազիան:
 » www.ikvpaxchristi.nl/UK/

International Alert-ը անկախ խաղաղաստեղծ կազմակերպություն է, որը ջանում է պարտադրված հակամարտությունից տուժած համայնքներում տևական խաղաղության և անվտանգության համար հիմքեր դնել: Հարավային Կովկասում International Alert-ը

նպաստում է քաղաքացիական հասարակության կայացմանը, ինչպես նաև օգնում, որ խաղաղության գաղափարի անհատ աջակիցներն ու գործարար համայնքները մասնակցեն խաղաղության ու հակամարտության պրոբլեմների լուծմանը:
 » www.international-alert.org

Kvinna til Kvinna-ն շվեդական հիմնադրամ է, որը խրախուսում է կանանց մասնակցությունը հակամարտությունների կարգավորմանը, խաղաղարար գործընթացներին և հետպատերազմական վերականգնմանը: 2010 թվականից սկսած՝ Kvinna-ն նպաստում է, որ հայ ու ադրբեջանցի կանայք ավելի արդյունավետ կերպով ներգրավվեն դարաբաղյան խաղաղարար գործընթացում:
 » www.kvinnatillkvinna.se/en

LINKS-ը /հակամարտություններին ու պետության կայացմանն առնչվող տեղեկատվական ցանց՝ Լոնդոնում/ տարիներ շարունակ զբաղվում է Կովկասում իրականացվող բազմապիսի նախաձեռնություններով, որոնք վերաբերում են խաղաղության կայացմանն ու քաղաքական երկխոսությանը: LINKS-ն այժմ, Arminfo-ի և 1news.az-ի հետ միասին, թողարկում է Commonspace.eu լրատվական կայքը /տե՛ս «Ինտերնետային աղբյուրներ» բաժինը/:

Saferworld-ը

հակամարտությունների կանխարգելմամբ զբաղվող միջազգային հասարակական կազմակերպություն է: Այն աշխատում է Հարավային Կովկասում՝ շահագրգիռ կազմակերպություններին օգնելով հասկանալ, թե ինչու համայնքներն իրենց անվտանգ չեն զգում, ինչպես նաև գտնել անապահովության պատճառներին արձագանքելու համապատասխան ձևեր:
 » www.saferworld.org.uk

Yeni Nesil-ը Բաքվի լրագրողների միություն է, որը նպաստում է լրագրողների մասնագիտական զարգացմանը, ինչպես նաև մասնակցում պատերազմի ու խաղաղության լուսաբանման երկկողմանի նախաձեռնություններին:
 » www.yeni-nesil.az



ՏԵՍԱՍԿԱՎԱՌԱԿ ԱՌԱՋԻՆ

13 տարի անց (9'13")	ՖԻԼՄ 1
Վերածնունդ (12'21")	ՖԻԼՄ 2
Ի՞նչ ենք մենք ուզում (16'28")	ՖԻԼՄ 3
Բզեզակերները (12'19")	ՖԻԼՄ 4



ՏԵՍԱՍԿԱՎԱՌԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Քաղաքացիությունը՝ փախստական (20'07")	ՖԻԼՄ 5
Ամուր ընկույզ (15'00")	ՖԻԼՄ 6
Կյանքից քշվածները (15'45")	ՖԻԼՄ 7
Ճակատագիրը թակում է դուռը (11'02")	ՖԻԼՄ 8
Ղարաբաղյան հեքիաթ (14'58")	ՖԻԼՄ 9



ՏԵՍԱՍԿԱՎԱՌԱԿ ԵՐՐՈՐԴ

Սպեկտր (18'52")	ՖԻԼՄ 10
Քամանչա-նամե (18'29")	ՖԻԼՄ 11
«Էգո» ոճով (21'27")	ՖԻԼՄ 12
Սալամ Ալեյքում, Կովկաս (12'22")	ՖԻԼՄ 13
Շուշին վրանի տակ (14'11")	ՖԻԼՄ 14
Դաունլոդ (7'18")	ՖԻԼՄ 15



ՏԵՍԱՍԿԱՎԱՌԱԿ ԶՈՐՐՈՐԴ

Իմ թշնամին՝ իմ ընկերը (29'47")	ՖԻԼՄ 16
8-րդ կիլոմետրին (15'12")	ՖԻԼՄ 17
Չարմուհին Կովկասից (17'45")	ՖԻԼՄ 18
Կատարսիս (20'28")	ՖԻԼՄ 19
Բոլոր ֆիլմերն էլ սիրո մասին են (12'07")	ՖԻԼՄ 20



» ԱՅՍ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐԻՆ ԷԼ ԴՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ՏԵՄՆԵԼ ԶԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԴԵՄՔՆ ՈՒ ՄԱՐԴԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ:

«Կինտերկոստությունները» եզակի նախաձեռնություն է, որի շրջանակներում հայ երիտասարդները՝ Լեռնային Ղարաբաղից և ադրբեջանցի երիտասարդները վավերագրական ֆիլմեր են արտադրել՝ իրենց տարանջատող հակամարտության վերաբերյալ: Այս ձեռնարկը ձեռք է կոծնի կինոդիտումներ կազմակերպել ու քննարկել հակամարտության գոտում ապրող մարդկանց խնդիրների, ուրախության, վշտի ու հուժկու մասին պատմող 20 կարճամետրաժ ֆիլմեր:

Այս ֆիլմերը բացում են վարագույրները՝ հայացք գցելով հաճախ մոռացվող, սակայն դեռևս վտանգավոր հակամարտության վրա ու լուսաբանելով հայերի և ադրբեջանցիների հաշտեցմանը խոչընդոտող դժվարություններից շատերը: «Կինտերկոստությունները» տարբեր մոտեցումներ է ներկայացնում. մարդկային տեսակետներ՝ մարդկանց համար, հայ ու ադրբեջանական հասարակությունների այն մարդկանց համար, ովքեր սովոր են հակամարտության միակողմանի լուսաբանմանը:

«Հաշտեցման ռեսուրսները» (Conciliation Resources) անկախ կազմակերպություն է, որը հակամարտության գոտիներում ապրող մարդկանց օգնում է կանխել բռնություններն ու խաղաղություն հաստատել: «Հաշտեցման ռեսուրսները» տրամադրում է խորհրդատվություն, աջակցություն և գործնական օգնություն: Ի լրումն դրան, Նրանք իրենց գիտելիքները փոխանցում են իշխանություններին և այն մարդկանց, ովքեր ջանք չեն խնայում հակամարտություններին վերջ դնելու, խաղաղաստեղծ քաղաքականությունն ու գործունեությունը ողջ աշխարհում բարելավելու համար:

Conciliation Resources
173 Upper Street
London N1 1RG, UK

Հեռախոս +44 (0)20 7359 7728
Ֆաքս +44 (0)20 7359 4081
Էլեկտրոնային փոստ cr@c-r.org
» www.c-r.org



Սույն գիրքը
իրատարակվել է
Եվրոպական
միության
աջակցությամբ:

Այստեղ
արտահայտված
կարծիքները կարող
են չհամընկնել
Եվրոպական
միության
տեսակետների հետ: